ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(9)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(9)

ԵՐԵՎԱՆ 2022

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*
Հարություն Մարության, *պ. գ. դ.*
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*
Հռիփսիմե Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*
Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*
Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*
Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*
Համո Սուքիասյան, *պ. գ. թ., դոցենտ*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*)
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*)
Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ Բրիտանիա*)

ISSN 1829-0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արփակ Ասատրյան

ԿԱՐԻՆՈՒՄ 1785 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ №3579 ՄԻՆԻՆ 8

Լիլիա Ավանեսյան

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՔՆԱԴԱՐՅԱՆ ԱՆԿՎԱԾԻ ԵՎ ԳՈՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԸՍՏ ՀՊԹ ՆՅՈՒԹԵՐԻ) 21

Հրազդան Թոքմաջյան

ՄԱԼԱԹԻԱՅԻ ՀՅՈՒՍՎԱԾ ԿԱՐ 38

Հասմիկ Պետրոսյան

ԳՈՒԳԱՐՔԻ ՏՆԱՅՆԱԳՈՐԾ ԲՈՒՍԱՆԱԽՇ ԳՈՐԳԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԸՍՏ ՀՊԹ, ՀԱԹ, ԼՓԵԹ, ԵՔՊԹ ՆՅՈՒԹԵՐԻ) 46

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Ասպղիկ Իսրայելյան

ԱՉՔԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ 56

Արևիկ Մելիքյան

ՊԱՏՈՒՄՆԵՐ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ 82

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նելլի Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԲԱՑԻԿ-ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ 94

Արմինե Շահբազյան

«ԴԱՎԻԹ ԲԵԿ» ԿԵՐՊԱՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՅՆԱՑՈՒՄԸ 103

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայկ Նազարյան

1826 – 1828 ԹԹ. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՄՆԱԿՑԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԶՈՐԱՅԻՆ ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱԿԱԶՄԸ, ԹՎԱԿԱԶՄԸ, ՀԱՄԱԶԳԵՍՏԸ, ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՇՆԵՐԸ 114

Վանիկ Վիրաբյան

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 1919 Թ. ԶՈՂ-ԲԱՍԱՐԳԵՉԱՐՅԱՆ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԳՆԴԱՊԵՏ ՔԼԱՅՎ ԹԵՄՊԵՐԼԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 124

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Լիլիա Ավանեսյան

ՆԱԶԻԿ ԱՎԱԳՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ 149

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 153

Աստղիկ Իսրայելյան
Պատմական գիտությունների թեկնածու
Հայաստանի պատմության թանգարան
astghikisraelian@gmail.com

ԱՉՔԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

Հիմնաբառեր. Չարակնություն, նախանձ, լուսատու, աղոթք, ազգություն, բնակավայր, իրիդոդիագնոստիկա:

Հավատալիքներում աչքը սարսափելի ազդեցություն կարող է ունենալ: Աչքով տալուն կամ չար աչքին հավատալը ոչ միայն ամենահին, այլև ամենատարածված ու կենսունակ պատկերացումներից է, որ գոյատևում է ցայսօր աշխարհի տարբեր ժողովուրդների գիտակցության մեջ:

Չար աչքը, աչքով տալն ու տրվելը հայոց լեզվի բարբառներում արտահայտվում են բազմաթիվ բառերով և բառակապակցություններով. չարակնություն, փաթերակ, յաչաղանք, նազար, նիաթ, ալմակ, աչիչ ըլլալ, չար աչքի գալ, աչք առնել, աչք դիպչել, չար աչքով զարնվել, աչքրոհլ, աչքիլել, նազար դպնել, ակնահարել, նազար տալ, նազար դնել, նիաթել, փաթերակ առնուլ, փաթերակել, աչքահար (աչքով տվող) և այլն: Ամենայն հայոց կաթողիկոս Հովհան Մանդակունին (478–490) վերլուծելով չարակնությունն ու նախանձը՝ մատնանշում է դրանց պատիժները. «22 *Իսկ նա, ով չարակնում ու նախանձում է, ո՛ր խավարի մեջ պիտի գնա և կամ ո՛ւր պիտի սուզվի, ինչպիսի՛ փանջանքներով պիտի խաշվի ու մաշվի:* 23 *Քանզի ախտերի սկիզբը նախանձն ու չարակնությունն են. նրանցո՛վ սատանան ընկավ փառքերից, նրանցո՛վ Ադամը ելավ դրախտից, և անեծքն ու քրտինքը, փուշն ու տատասկը, մահն ու մեղքերը տիրեցին Ադամի բոլոր ծնունդներին, նրանցո՛վ Կայենը երերման ու ահուդողի մատնվեց... ո՞ր չարիքներն են առավել ժանտ, քան նախանձն ու չարակնությունը, որովհետև հրից առավել այրող և սրից առավել սպանող են... ոչ մի չարիք նախանձի և չարակնության նման չէ, որովհետև [դրանք ունեցողը] մշտապես մեղքերի մեջ է. գիշեր և ցերեկ հանապազ չի դադարում սպանելուց, քանզի մշտապես բարձած՝ իր հետ է կրում իր չարությունները*» (Մանդակունի ԺԱ, 22, 23, 1209):

Ժողովրդական հավատալիքներում ամեն բան ենթակա է չար աչքի ազդեցությանը՝ մարդիկ, ընտանի կենդանիները, շերամի որդերը, մեղուները, գործիքները, զենքերը, կահկարասին, տունը, այգին, արտը և այլն: Ինչպես Ա. Պատրիկն է նշում. «*Չար աչքի կ'ենթակուին ընդհանրապէս նորապսակ ամոլներ, գեղադէմ*

* Ստացվել է 26.04.2022թ., ուղարկվել է գրախոսման 04.05.2022թ., ընդունվել է տպագրության 05.08.2022թ.

օրիորդներ ու երիտասարդներ, նորածին մանուկներ, տղաձգան կիներ, նորապսակ հարսներ, նորաշէն տուներ, գեղեցիկ հագուողներ, ձիեր, եզներ, կովեր և այլն» (Պատրիկ 1983, 146): Եվ ինչպես Ե. Շահազիզն է գրում. «*…ամեն մի լավ բան, մինչև իսկ խմորեղենը պետք է պահպանել չար աչքից*» (Շահազիզ 1902, 48): Այն ի զորու է փչացնելու, ավերելու, կործանելու, հիվանդացնելու, սպանելու: Անգամ ինքնասպանությունը չար աչքի պատճառով առաջացած հիվանդության հետևանք է համարվել (ԴԱՆ, 1972, 113): Զուր չէ, որ առածում ասվում է. «*Աչք զտոյսեն* (աշխարհը) *ա կերել*» կամ «*Չար աչքը քարն էլ ճաքացնում ա*» (Ղանալանյան 1960, 295): Եվ ոչ միայն կենդանի մարդն է աչքով տալիս, այլև այն աշխարհի գնացածը. օրինակ, երբ երկարակյաց ծերունին մահանում էր և դրանից հետո ընտանիքի որևէ անդամ հիվանդանում էր, կարծում էին, թե հագուցյալի աչքից էր և նրա գերեզմանը փորում, համապատասխան միջոցներ էին ձեռք առնում, որպեսզի հիվանդը չմահանար (Լալայեան 1897, 153), այսպիսով՝ չարխափան հմայությունն անհրաժեշտ էր դառնում մարդու մահվանից հետո ևս:

Չար աչքի վերաբերյալ ուշագրավ դիտարկում է արել Հ. Գազանճյանը. «*Եւդոկիացի կիները կը հաւատան Նազարի, այսինքն նայուածքի չար ազդեցութեան որ թերևս կրնայ ասրիճան մը ընդունելի համարուիլ եթէ հաւատանք Անձնական մագնիսականութիւն* (ֆր.՝ Magnétisme personnei) *ըսուած ուժին գոյութեանը և անոր վերագրուած դերին զոր այսօր կուզեն հաստատել բազմաթիւ գիտուններ: Շատ անգամ երբ իրենց պզտիկները որ և է տկարութիւն մը կ'ունենան, կը կարծեն թէ Նազարի հանդիպած է և զայն ազատելու համար չար աչքին ազդեցութեան հետեւանքներէն՝ կը դիմեն Աղօթող կոչուած մասնաւոր կիներու: Այս կիները ձեռքներնին հացի դանակ մը առնելով՝ կ'սկսին աղօթքներ մոլտալ, սարսափելի կերպով յորանջել և օգկալ ու միևնոյն ատեն այդ դանակով հիւանդին գլխուն և մարմնոյն շուրջը հպանցիկ շարժումներ կատարել, գրեթէ նման արդի Magnntiseur-ներուն ի գործ դրած passe կոչուած շօշափումներուն: Ինծի կը թուի թէ Աղօթող կիներու կողմէ ի գործ դրուած բժշկութեան այս ձևը առընչութիւն ունի Մագնիսականութեան կամ Քնածութեան* (ֆր.՝Hipnotisme) *հետ որոնք շատ հին դարերէ ի վեր ծանօթ էին, թէև Մեսմերի կարծեցեալ գիւտէն վերջը միայն ուշադրութեան և գիտական ուսումնասիրութեան առարկայ դարձած ըլլան*» (Գազանճեան 1904, 971): Չար աչքի ազդեցությունն անցկացնող «*…աղօթող կիները, դանակը որով իրենց աղօթքը ըրած էին, խաչակնքելով, բացուածքի մի մէջ կը հրէին ուր կը մնար քսանչորս ժամ*» (Ալպոյաճեան 1952, 1530–1531):

Այժմ էլ չար աչքի գաղափարը նստած է ժողովրդի գիտակցության մեջ: Մշտապես կարելի է տեսնել մարդկանց վարքն այն պահին, երբ կամենում են հակազդել և վերացնել ակնահարվելու վտանգը փայտին հարվածելով կամ «*թու՛, թու՛, թու՛*» ասելով, որ տարածված է ոչ միայն հայերի, այլև աշխարհի բազմաթիվ ժողովուրդների մոտ: Կամ թեկուզ գինի խմելու ժամանակ օրհնելիս, ինչպես Գ. Սրվանձտյանցն է նշում. «*Ձե ողջութեն. Ասրված ձեր արև պահի… երկեն արև, սպիտակ իրես ելնեք. չար աչքից, չար սատանից, չար մարդու շառից պարզիրես մնաք. երկնավոր թագավոր Ասրված ուր յոթն աթոռով ձե օրհնի, ձեր չարակամն կուրնա, ձեր ուր քարին չդեպնի…*» (Սրվանձտյանց 1978, 157): Վատ աչք ունեցողներին հե-

տնյալ կերպ են ճանաչում. եթե մի մարդ տուն եկավ ու նրա գնալուց հետո վատ բան պատահեց, ուրեմն նա չար աչք ունի և հարկավոր է նրանից խուսափել (ԴԱՆ, 1978, 13–14):

Չարակնության մասին հսկայական ժառանգություն է պահպանվել բանահյուսության տարբեր ժանրերում՝ ընդհուպ մինչև մանկական խաղերը, Համբարձման տոնի վիճակի քառյակները, և գրականության մեջ՝ առհասարակ: Լոռիում գրանցված երկխոսության և աղոթքի ձևով հորինված մանկական խաղերից մեկը մեջբերում ենք բառացիորեն.

Աղջիկներից քնքոյշը. — *Աղջի ջան, գլուխս շատ գէշ ցաւում է,*

Նրան ծաղրող մէկը. — *Ախ եարաբ իմանամ ո՞վ աչքը տուեց:*

Մէկ ուրիշ կատակասէրը. — *Աղջի ջան, արի աղօթեմ, որ անց կենայ, որ նրանից յետոյ էլ ոչ ով չը կարենայ քեզ աչքը տալ…* (Լալայեան 1904, 44–45):

Վիճակի քառյակներից կարելի հիշատակել, թեկուզ, Վարանդայի «Ձան գյուղումներից» հետևյալը՝ «*Անապատէն*[1] *սրկվ եաշկը,/Իմ յարէն ղամչին մաշկը,/Ադա խըրէյգ քյընի յէք,/Քյէզ յօր կօնէ չար աչկը*» (Դադեան 1908, 42):

Չար աչքը խափանելու հատուկ աղոթքներում ներկայացվում է, թե ինչը կամ ով է տուժում չար աչքից. «…*Չար պահ ու՞ր կերթաս./Անիաչ խմորին,/Բաց օրօրանին,/Բաց կամարին,/Լաւ էզին հսին* (ուսին),/*Լաւ գոմշին հսին./Լաւ ձիուն ձարին* (պոչ),/*Լաւ ոչխարին ջոկին,/Լաւ ջահջին քարին,/Լաւ արտին գարուն,/Եւ ամեն բարուն*... (Լալայեան 1892, 14–15): Մի այլ աղոթքում ասվում է՝ «...Չար աչքը կերթար, Քրիստոս դէմ դիպաւ,/Ըսեց. «*Պիղծ անօրեն հո՞ր կերթաս»:/Ըսուց.* «*Կեռ կուտոշ կարմիր կովին,/Մեծակուտոշ սև գոմշին,/Կացինն ու իւր կոթին,/Սողոմոնն ու իւր թաղկին,/Մանուկն օրոցքին./Էրիկ մարդու աչքէ,/Գլխուն արևուն,/Կնիկ մարդու աչքէ/Ծծին ու ծամին*»:

Աչքի չարությունը նույնիսկ երկնային էակներին ու մարմիններին է վնասում: Մեջբերված վերջին աղոթքի սկզբի հատվածում ինքը՝ Աստվածամայրն է աչքից տուժողը՝

Կուս Մայրամ կերթայ դրախտը
Հետ գուլայ հետ կաղաղէ.
… Մեր տէր Յիսուսն դէմ ելաւ ըսեց.
«Մայր Մարիամ, է՞ր գուլաս, է՞ր կաղաղես».
«Իմ Տէր, է՞ր չլամ, է՞ր չաղաղեմ.
Ոչ գիտեմ չար նիաթ է,
Իրեք հարուր վաթսունվեց պիղծ ցաւ է»:
«Մայր Մարիամ, մուտ Սողոմոնի տաճարը.
Բոնէ առաքելոց դանակը,
Կտրէ չար աչքը, չար նիաթը, չար խոխորդը,
Իրեք հարուր վաթցունը վեց պիղծ ցաւը,
Լից պոնձէ կուժը,
Թապլէ անյատակ ծովը… (Լալայեան 1892, 14–15):

---

[1] Սրբատեղի է:

Աստվածների տուժելը չար աչքից և մարդկանց տուժելն աստվածներից սովորական երևույթ էր հին կրոնական պատկերացումներում: Այս առիթով Թ.Ֆ. Էլուորթին գրում է. «*Հնում հավատում էին, որ աստվածները նույնպես նախանձով էին նայում մարդկանց բարի բախտին և հաճախ չարախնդորեն քանդում էին այն: Հավատում էին նաև, որ աստվածները նախանձում են միմյանց և չար աչքով են նայում իրենցից համեմատաբար պակաս զորեղին. դրա համար էլ Մերկուրին երբեք ձեռքից բաց չէր թողնում կադուցեուսը՝ իր պահապան-գավազանը*» (Elworthy 1895, 15):

Հայկական ավանդություններին ևս խորթ չէ երկնային լուսատուներին ակնահարելու գաղափարը՝ «*Արևն ու լուսինը քույր-եղբայր են, արևը եղբայրն է, լուսինը՝ քույրը: Հավատում են, թե քույրն առաջներում եղբոր հետ միասին էր գալիս-գնում, սակայն որովհետև շատ գեղեցիկ էր, չար աչքը դիպել էր նրան, և նա ծաղիկ հիվանդությամբ էր հիվանդացել: Այդ դեպքից հետո նա խնդրել էր եղբորը՝ ծակել այն մարդու աչքերը, ով իրեն կնայի, որպեսզի ինքն իրեն չար աչքից պաշտպանի և միաժամանակ քրոջ վրեժը լուծի*» (Աբեղյան 1975, 43):

Հավատալիքներում աչքով տալը տարբեր հանգամանքներից է կախված՝ սկսած մարդկանց ու կենդանիների ֆիզիկական հատկանիշներից մինչև երկնային լուսատուների շարժման ուղղությունն ու դիրքը: Երկնային մարմինների և չար աչքի կապի վերաբերյալ ուշագրավ մի հատված կա Հելիոդորոսի «Եթովպականք» վեպում, որտեղ Եգիպտոսի Մեմֆիս քաղաքից Հունաստան եկած քուրմն ինքն իր մասին պատմում է, թե սկզբում երջանիկ է եղել, սակայն տարիներ անց ճակատագրով կանխորոշված երկնային լուսատուների շրջապտույտը փոխել է իր բախտը և Քրոնոսի աչքը ավերել է իրենց տունը, որից հետո ամեն բան հակառակվել է՝ թարսվել (Гелиодор 1965, 98): Այսպիսով՝ չար աչքը գործում էր թե՛ երկրի վրա, և թե՛ երկնքում: Ինչ վերաբերում է ֆիզիկական ազդեցությանը, չար աչքի ուժի հանդեպ ամենազգայունը երեխաներն ու փոքրիկ կենդանիներն են: Ամենուրեք տարածված այս կարծիքը հաստատում է նաև Պլուտարքոսը՝ նշելով, որ պատճառը նրանց փափուկ և թույլ կառուցվածքն է, մինչդեռ ով արդեն կազմավորված և բավականաչափ ամուր է, պակաս չափով է տուժման ենթակա (Плутарх 1990, 90): Իրոք, փոքրիկ երեխաներն անմիջապես նյարդայնանում են այն ժամանակ, երբ նրանց աչքերի մեջ են նայում և սկսում են լաց լինել ու փախցնել հայացքը, շրջվելով իրենց նայող մարդուց: Նրանք առավել խոցելի են, երբ չար աչքով մարդն է իրենց նայում: Երեխաներին առնչվող հակառակ հավատալիքներից է հետևյալը. Եթե կաթնակեր երեխային կրծքից կտրեն և միառժամանակ հետո կրկին կուրծք տան, նրա աչքից «սար ու քար կպատռի», երբ նա մեծանա (Լալայեան 1907, 43: ԴԱՆ, 1978, 7): Կարծում են նաև որ եթե երեխային կուրծք տալն ընդհատեն, հետո նորից տան, նա շատ շուտ կենթարկվի չար աչքի ազդեցությանը: Եվ ամենապակասը վեց–յոթ ամիս պետք է անընդհատ կաթ ուտի, որպեսզի անվտանգ մեծանա (ԴԱՆ, 1978, 7):

Մարդու ֆիզիկական վիճակի և չար աչքի առնչության հետաքրքրական օրինակ է թլինգիթների այն պատկերացումը, որի համաձայն աչքով տալը կանանց ամսականների շրջանի հետ է կապված: Այս ժամանակ աղջիկներին մեկուսաց-

նում էին, գլխներին շատ լայն երիզներով գլխարկ դնում, որպեսզի նրանք չկարողանային նայել երկնքին և պղծել այն: Նրանց հայացքը դժբախտություն էր բերում որսորդներին, խաղասերներին և այլոց: Բացի այդ, նրանց հայացքից ամեն բան կարող էր քար դառնալ (Ратнер-Штернберг 1929, 290):

Որոշ վայրերում համարվում է, որ չար աչքը կախված է մարդկանց մազերի գույնից, ինչպես Լոռիում՝ շեկերից (Լալայեան 1903, 237): Գուրիացիների հավատալիքներում էլ է այդպես, չնայած, որ իրենց ազգաբնակչության մոտ կեսը շեկ է (Мамаладзе 1893, 109–110): Լուրջ նշանակություն է տրվում նաև աչքերի գույնին: Հայերի մեջ, մեծամասամբ, կապույտ և խաժ աչքերն են չար համարվում, առավել ևս, որ չարքի, դևի, սատանայի աչքերը կապույտ են և իրենք էլ կապույտ աչքեր են սիրում (Ամատունի 1912, 540): Կապույտ աչքեր ունեն և մեզնե աղեկները (քըզ-մեզ աղէկներ = քան զմեզ աղէկներ = մեզնէ աղէկներ), որոնց քիչ ուշ կանդրադառնանք:

Այն վայրերում, ուր մարդկանց մեծամասնության աչքերը բաց գույնի են, հիմնականում սև աչքերն են չար համարվում: Իսկ ընդհանրապես վտանգավոր են համարվում շիլ աչքեր և բնական այլ արատներ ունեցող մարդիկ:

Համատարած այն գաղափարը, որ աչքերը ցույց են տալիս մարդու էությունը, գտնում ենք նաև Վեդաներում: Այստեղ աչքերի զորությունը մարդու ամբողջ ուժն է ցույց տալիս, կախված է գույնից, ֆիզիկական այլ առանձնահատկություններից ու հայացքի ձևից: Այսպես՝ արյունոտ կարմիր աչքերը չարություն են արտահայտում և բնորոշ են բարկացկոտ ու չարակամ մարդկանց, բարբարոսներին, դևերին ու ահարկու աստվածներին: Կատվի նման աչքերով մարդիկ չարամիտ են, շեղ ու թաքուն հայացքով նայողները գողեր են, խեթ հայացք ունեցողները դաժան մարդիկ են (Gonda 1969, 5): Աչքով տալու ունակությունը հավատալիքներում կախված է ինչպես մարդու ընտանեկան, սոցիալական, ազգային պատկանելությունից, այնպես էլ բնակավայրից: Հնում կործանարար աչք ունեցող էին համարվում Հռոդոսի բնակիչները՝ ըստ Օվիդիոսի (Овидий 1963, 201), տրիբալներն ու իդյուրացիք՝ ըստ Պլինիոսի, ինչպես նաև ըստ Պլուտարքոսի՝ թեբեցիները, ովքեր ավանդության համաձայն ծագել էին Կադմոսի ցանած վիշապի ատամներից (Плутарх 1990, 440; Elworthy 1895, 10, 12):

Գորիսի Խնձորեսկ գյուղում բրուտ Երվանդ Մանուչարյանը 1981թ. վկայում էր, որ այնտեղ մի չար աչքով ընտանիք էր բնակվում: Այդ ազգի բոլոր անդամներից խուսափում էին մարդիկ. «*Նրանց տանը ոչ ոք հաց չէր ուտում. վտանգավոր էր*»: Այս տան անդամներից մեկը՝ հարսը, աշխատելու ժամանակ նայել էր կժին և կուժը կտոր-կտոր էր եղել (ԴԱՆ, 1981, II, 6): Շամախու թաթարները համարում էին, որ կան այնպիսի ընտանիքներ, ուր չար աչքը սերնդեսերունդ ժառանգաբար փոխանցվում է ծնողներից զավակներին (Эфендиев 1893, 211): Իսկ Թալինում 1970-ական թվականներին ասում էին, որ աչքով տալը «*աչքից չէ, սրտից է և ջնսից*[2] *է*» (ԴԱՆ, 1977, 51):

Հնդկաստանում (1932թ. տվյալներով) կար հայացքով պղծողների կաստա, որի անդամներին ցերեկվա լույսով չէր թույլատրվում դուրս գալ իրենց խրճիթնե-

[2] Ջինս՝ 1. տոհմ, 2. ցեղ, 3. սերունդ (Աղայան 1976, 1242):

րից, քանի որ նրանց հայացքը ապականող էր համարվում: Դասայնության, կաստայականության և ազգային պատկանելության տեսանկյունից վառ օրինակ են հանդիսանում չանդալները. նրանց հետ խոսելը և նրանց վրա նայելն ուղղակի մեղսագործություն էր համարվում (Сингх 1953, 153–154): Զմերձենալու և հայացքով պղծելու նույնպիսի երևույթ էր գործում նաև Խորեզմում 20-րդ դարում. հանգուցյալ լողացնողների մեկուսախմբի անդամները պարտավոր էին փողոցում չնայել իրենց հանդիպող մարդկանց: Վերջիններն էլ նրանց տեսնելիս պետք է անպայման աղոթքներ ասեին կամ դեմքով շրջվեին դեպի արևը: Աշխատանքը կատարելուց հետո այս խմբի մարդիկ տուն դառնալիս ձիուն թարս էին հեծնում (Снесарев 1969, 178), որպեսզի իրենց հայացքը չընկներ դիմացից եկողների վրա:

Անգլիացիները մինչև այժմ համարում են, որ գնչուները չար աչք ունեն և ողորմություն են տալիս նրանց, որպեսզի չակնահարվեն (Хоуп 1998, 82): Աֆրիկյան որոշ ցեղեր կարծում են, որ երկվորյակները չար են ու չար աչք ունեն, չնայած այլ ցեղեր էլ նրանց անվանում են «աստծո շնորհ», «երկու աստվածություն», «աստծո զավակներ» կամ «վերևից եկած մարդիկ» (Фридрих 1985, 33):

Չար աչք ունենալու առումով առաջին տեղն էին գրավում կախարդները, որոնց չարիք գործելու անսահմանափակ հնարավորություններ էին վերագրվում: Իռլանդիայում, օրինակ, Էլիզաբեթ թագուհու օրոք կախարդներին պատժում էին, մեղադրելով, որ նրանք իրենց չար աչքերով խայթում էին կենդանիներին և այդպիսով նրանց մեջ հիվանդություններ տարածում (Elworthy 1895, 16): Կախարդների նկատմամբ այս աներկբա համոզմունքը տարածված էր միշտ և ամենուրեք: Այսպես՝ Ա. Լեմանը նշում է, որ քաղդեացի կախարդների հայացքն իսկ բավական էր մարդկանց սպանելու համար (Леманн 1900, 42): Իրանական առասպելաբանության մեջ արաբ զորավար Ջենիգակը ներխուժելով Իրան, իր չար հայացքով սպանում էր բարեպաշտ զրադաշտականներին, որովհետև կախարդ էր (ՀՈՍ 1998, 207): Չար աչքով կախարդելը և կախարդվելը հայոց լեզվում արտահայտվում են փաթերակ, փայթերակ, փեթերակել, փաթերակ առնուլ բառերով՝ փոխառված իրանական paity-ra-ից. «*Սա Ահրիմանի չար ու ավերիչ ներգործությունն է Օրմազդի բարի արարածների վրա, Ահրիմանի հայացքը, որով նա օձի կերպարանք առած կռվում է Օրմազդի դեմ՝ երկինքը դեպի իրեն ձգելով: Օրմազդն ասում է Զարաթուշտրային. «Այդ ժամանակ օձն ինձ նայեց, այդ ժամանակ Անգրա Մայնյու օձը, որն ամբողջովին մեռած է, առաջացրեց 9 և 90 հիվանդություն և ինն հարյուր և ինն հազար և իննսուն հազար հիվանդություն*» (Vendidad 22, 1–6): Ահրիմանի այս հակագործությունը, որը Օրմազդի դեմ դևեր և անշունչ առարկաներ է ստեղծում, կոչվում է paity-ra–հակառակ շարժում, օպոզիցիա (Աբեղյան 1975, 100–101):

Հայոց առասպելներում չար աչքով և կախարդական ուժի զորությամբ հայտնի էր Երվանդ թագավորը: Նրա հայացքն այնքան ահարկու էր, որ արքունի սպասավորներն ամեն առավոտ լույսը բացվելիս, որձաքար վեմեր էին բռնում նրա աչքերի առաջ: Երվանդի աչքերի չարությունից քարերը պայթում էին. «*Ասեն զԵրուանդայ՝ ըստ հմայից դժնեայ գոլով ական հայեցուածով. վասն որոյ ընդ այգանալ աչալրջացն՝ սովորութիւն ունել սպասաւորացն արքունի՝ վէմս որձաքարեայս ունել ընդդէմ Երուանդայ, և ի հայեցուածոցն դժնութենէ ասեն պայթել որձաքար*

վիմացն…»: Խիստ ուշագրավ է Մովսես Խորենացու մեկնաբանությունը առնչությամբ՝ «*… Բայց այս կամ եղիցի սուտ և առասպել և կամ դիւական ինչ առ իւր ունել զօրութիւնս, զի այնպէս հայեցուածոցն անուամբ վնասեսցէ զորս կամի*» (Մովսես Խորենացի 2003, Բ, ԽԲ): Երվանդ թագավորի առասպելին շատ նման ավանդություն է գրի առել Հ. Ճանիկյանը 19-րդ դարում ակնեցի մի կնոջ մասին. «*Կըսեն թէ մեծ վէմ մը կայ եղեր, զոր կոտրել կուզեն և չեն յաջողիլ.–այն քաղաքին մէջ համբաւեալ չար աչք ունեցող պառավ մի կայ եղեր. կը բերեն կինն, որ երբ նայելով քարին կ'ըսէ «Օ՜, այս ինչ մեծ քար է», քարն անմիջապես կտոր-կտոր կ'ըլլայ*» (Ճանիկեան 1895, 159–160): Այս երկու ավանդությունները համեմատելիս առաջին հայացքից կարող է թվալ, թե աչքով տալու համար նշանակություն չունեն մարդու սեռը կամ ֆիզիկական ուժը, մինչդեռ թովչական առանձնակի հզորությունը՝ կախված ժամանակից և վայրից, մերթ տղամարդկանց կողմն էր անցնում, մերթ՝ կանանց: Ինչ վերաբերում է չար աչքի հավատի շարունակականությանը, Գ. Սրվանձտյանցն էլ է ուշադրություն դարձրել դրա վրա: Նա գրում է. «*Չար աչքե շատ կը վախնան և զարհուրելի բաներ կը պատմեն. ինչ որ Խորենացին գրած է Երվանդ Բ Արշակունվոյն վրայոք, կատարելապես կ'ընդունին այսօր հայաստանցիք. բայց աչքեն ավելի սրտի չարության արդյունք կը համարին. զորօրինակ. եթե չար աչք մեկը՝ զոյգ մը ընտիր գոմեշ տեսնա ու ըսե. «Օ՜, ինչ աղեկ են», իսկոյն կը պատրոհին անոնք: Եթե ձիու նայի, ձիերը կ'ինան կը սատկին, եթե գեղեցիկ տան մը՝ պիտի փլչի այն տուն. եթե մեկի մը հաջողության՝ պիտի ձախորդի անոր գործը. մարդոցմե շատերը կը հիվանդանան, շատերը կը մեռնին. քար անգամ կը հալի. կանանչ ծառեր և արտեր կը գոսանան և այլն*»: Նա հատուկ անդրադառնում է աչքի գույներին, շարունակելով. «*Ընդհանրապես խիստ կապույտ և կանանչ աչք ունեցողներ չար աչք կը լինին, զորս կ'անվանեն «Չալաղապտուղ»*» (Սրվանձտյանց 1978, 161):

19–20-րդ դարերում Հայաստանում գլխավորապես հակված էին կարծելու, որ չար աչքն ավելի բնորոշ էր տղամարդկանց քան կանանց: Օրինակ, բաղարջ թխելիս տղամարդկանց մուտքը թոնրատուն խստիվ արգելվում էր, այլապես բոլոր բաղարջները թոնիրը կթափվեին (Լալայեան 1914, 44): Օսեթիայում նույնպես, երբ Նիկոլայի Կուվդի տոնակատարության առիթով կանայք մեծ կարկանդակ էին պատրաստում, ոչ մի տղամարդ իրավունք չուներ մուտք գործելու անգամ այդ շինությունը ողջ ընթացքում (Басилов, Кобычев 1976, 154):

Նույն վերաբերում էր տղամարդու անեծքին. «*…մօր անեծքը որդուն չի բռնում, իսկ հօր անեծքը, օ՜, դա մեծ բան է, վա՜յ այն որդուն, որ հօր բարկութիւնը կը շարժի և հօր անեծքին կարժանանայ, հօր անէծքը անպատճառ կը բռնէ*», — գրում է Մուրադյանցը (Մուրադեանց 1900, 129): Հնում հավատում էին, որ եթե հայրը երեխայի շորերը կոխեր, երեխան հիվանդոտ կլիներ (Պալեան 1899, 568): Ինչպես նշում է Օ. Ֆրեյդենբերգը, նախատոհմատիրական շրջանում «հայրը» սերտորեն կապված էր անդրաշխարհի և նրա բնակիչների հետ: Նա, որպես քուրմ, կատարում էր հոգեհանգստյան ծեսերը և դա հետագայում բոլորովին չէր բացատրվում նահապետի նրա դերով: «Հայրը» կատարում էր անդրաշխարհի գործառույթները որպես մահվան աստվածություն, որպես տոտեմ-մահ: Որովհետև մահը ծնունդ է:

Երբ ծննդյան իրական պատճառը հայտնի չէր, երբ արյունակցական կապի մասին պատկերացում չունեին, «հոր» ծնող գործառույթները արտահայտվում էին նրանով, որ նա կարող էր սպանել և մեռցնել: Այդ «հայրն» ամենևին էլ արյունակից հայրը չէր. նա առաջնորդ էր, տոտեմ: Նա արյունակից հայր է դառնում հաջորդ՝ տոհմատիրական շրջանում, երբ արյունակից ծնողին սկսում են անվանել «հայր»: Աստված, անդրաշխարհ, կյանք՝ մահվան ձևով, քուրմ, ահա թե ով է կոչվում հայր (Фрейденберг 1978, 31–32, 44): Կային դեպքեր, երբ տղամարդկանց ներկայությունն արգելվում էր թե՛ առօրյայում, թե՛ ծիսական արարողություններում. Այսպես՝ Հայաստանում երեխան ծնվելուց հետո նախքան մկրտությունը հայրն իրավունք չուներ նրան ձեռք տալու (ԴԱՆ, 1977, 29), իսկ մկրտության խորհուրդը կատարելիս, նա չպետք է ներկա գտնվեր ո՛չ տանը, և ո՛չ էլ եկեղեցում (Լալայեան 1898, №1, 230; Լալայեան 1900, 279; Լալայեան 1907, 38): Քեսապում համարվում էր, որ ոչ միայն հայրը, այլև հոր հայրը իրավունք չուներ չմկրտված մանկանը գրկելու: Քառասունքը լրանալուն պես մկրտում էին երեխային և համարում էին, որ մկրտությունը բուժիչ խորհուրդ ունի (Զոլաքեան 2016, 231): Նորածին երեխային կրծքով կերակրելիս էլ էին խուսափում հոր ներկայությունից, որպեսզի մոր կուրծքը չծակծկվեր (Լալայեան 1907, 42): Հոր բացասական ուժը՝ կապված երեխայի հետ, արտահայտվում էր նաև այն սովորույթով, որ 40 օրը չլրացած երեխայի վրա հոր շորերից չէին գցում, այլապես խորշակ կլիներ (Լալայեան 1907, 38, 42): Եթե երեխան հիվանդանում էր, հայր չտեսած երեխայի շորեր էին հագցնում այդ հիվանդ երեխային, որպեսզի նա բուժվեր (ԴԱՆ, 1978, 12):

Հոր նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքին է անդրադառնում Ե.Լալայանը. «*Հայրը այստեղ համարվում է մի հյուր… Հայրը տան մեջ մի խորհրդավոր անձնավորություն է, նրա տան եղած ժամանակ ընտանիքում տիրում է սրբազան լռություն, հարսները ծածկում են երեսները, աղջիկները քաշվում են մի անկյուն… ամուսնացած տղամարդիկ իսկույն հեռացնում են իրենցից զավակներին, որպեսզի հայրը չտեսնի*» (Լալայեան 1897, 151): Նույնիսկ ուղղակի, ցանկացած որևէ տղամարդ կարող է անցանկալի լինել որոշակի հանգամանքներում. օրինակ՝ «*Գուլպայ հիւսած ատեն թելին վրայէն այր մարդ մը եթե անցնի, գուլպան հիւսողին գործը անյաջող կ'երթայ*» (Պալեան 1899, 523):

Վերադառնալով Երվանդ թագավորի առասպելին, պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ այստեղ շեշտվում է, թե հատկապես երբ է նրա հայացքն առավել հզոր ու վնասաբեր եղել, այսինքն՝ առավոտյան: Այս պարագան անկարևոր չէ, որովհետև, առհասարակ, տարածված էր այն համոզմունքը, որ առավոտյան առաջին հայացքն է ամենասաստիկ վտանգավորը: Սրա կապակցությամբ տեղին է հիշատակել յորքշիրցի այն մարդու պատմությունը, որն ամեն առավոտ իր առաջին և ամենակործանիչ հայացքը գցում էր տան մոտ աճող տանձենուն, նրա վրա «թափելով իր ողջ թույնը», որպեսզի օրվա ընթացքում անմեղ մարդկանց չվնասեր: Եվ միառժամանակ անց այդ ծառը չորանում է (Хоуп 1998, 82): Գիշերվա ընթացքում բացասական լիցքերն անխոչընդոտ և անխափան կերպով կուտակվում են չար աչքով մարդու մեջ և առավոտյան որոշակի հանգամանքների շնորհիվ (ինչպես քարին ու ծառին նայելը) սպառվում են, երբեմն՝ թեկուզ և

մասնակիորեն, ոչ ամբողջապես: Դրա համար էլ ինչպես այս, այնպես էլ Երվանդ թագավորի դեպքում շեշտվում է, որ հատկապես առաջին հայացքն է նետում չեզոքացնող առարկայի վրա: Բացի դրանից, ակնհայտ է, որ չար աչք ունեցող մարդիկ լիովին գիտակցում և ընդունում են իրենց այդ հատկությունը: Մեր օրերում կա այն հավատքը, թե չար աչք ունեցող մարդն ինքն իրեն վնասում է իր աչքով և եթե ինքն իրեն աչքով է տվել, նա պետք է չար աչքը հանող աղոթքներ ասի իրեն փրկելու համար (ԴԱՆ, 1976, I, 36): Կարևոր նշանակություն ունի ոչ միայն առաջին հայացքը, այլև արտասանված առաջին խոսքը. եթե որևէ մեկը հանդիպում է չար աչքով հայտնի մարդու, նա պետք է անմիջապես ինքը սկզբից բարևի կամ խոսի նրա հետ, որովհետև եթե չար աչքով մարդն առաջինը խոսի, նրա աչքն անմիջապես կկպչի (ԴԱՆ, 1980, 37): Միևնույնն է, երբ չար աչքով մարդը մեկի տուն է գնում. չար աչքի ազդեցությունը կանխելու համար տանտերն անմիջապես աշխատում է առաջինն ինքը խոսել (ԴԱՆ, 1981, II, 6):

Ի դեպ, տարբեր է չար հայացքի ներգործման տևողությունը՝ մի դեպքում այն վայրկենապես է գործում, մի այլ դեպքում՝ դանդաղ (Эфендиев 1893, 212):

Չար աչքի, կախարդանքի և չար ոգիների կապը մշտապես առկա է մարդկանց գիտակցության մեջ: Կախարդության և չար ոգիների կապի մասին 1603 թ. ճիզվիտ Մ. Դելրիոն գրում է. «Հմայությունը մի զորություն է, որ ծագում է սատանայի հետ դաշնակցելուց: Երբ, այսպես կոչված, կախարդը չար միտումով որևէ մեկին նայում կամ գովում է իրեն հատուկ ձևով, նա այդ մարդուն վարակում է չարությամբ»: Ու նաև ասում է, որ «կախարդանքը կարող է գործել հպման կամ շնչելու միջոցով»: Վերջինը ոչ միայն ամենակործանաբերն է, այլև ամենից ավելի վարակիչը (Elworthy 1895, 36):

Ժողովրդական պատկերացումներում կախարդների չար աչքերի սարսափազդու ունակությունները վերաբերում են նաև քահանաներին, ըստ որում՝ անկախ կրոնական պատկանելությունից: Հնդկական վեդաներում համարվում էր, որ սոմա խմած բրահմանն ի վիճակի է լոկ մի հայացքով սպանել իր թշնամիներին (Gonda 1969, 17): Պարզ է, որ այս պատկերացման հիմքում ընկած է հոգևորական-գերբնական ուժ կապը, որը դարեդար փոխանցվելով, գոյատևում է տարբեր ժողովուրդների հավատալիքներում: Հնում քրմերին և հոգևոր մյուս պաշտոնյաներին վերաբերող այլևայլ հատկանիշներ անցել են քահանաներին: Քահանա բառի բացատրությունն ինքնին պարզաբանում է հարցի էությունը: Սեմական այս բառի բուն իմաստն է հմայող, կախարդ, բախտագուշակ (Աճառյան 1979, 540): 20-րդ դ. սկզբներին ռուսները որոշ շրջաններում բացահայտորեն համարում էին, որ քահանան կարող էր կախարդ լինել (Никитина 1928, 305): Հայկական բանահյուսական ժառանգությունը ևս զուրկ չէ նման հավատալիքներից: Օրինակ՝ Տիրոտ քահանան, ըստ ավանդության, իր հմայական ուժով կարողանում էր լոեցնել գորտերին (Լալայեան 1898, 110): Սակայն քահանաները նաև բուժում էին: Օրինակ՝ Վարանդայում վախը վեր քաղող քահանաների գերդաստան կար, որ հմայությամբ սերնդեսերունդ բուժում էր վախի հետևանքով հիվանդացած մարդկանց (Լալայեան 1897, 233–234): Համշենահայերը (և ոչ միայն) մոլլաներին և քահանաներին էին դիմում, երբ հույսը կտրում էին բժիշկներից: Քահանաներն ու մոլլաները գիր,

նուսկա, հոմայիլ էին սարքում, կաշտում անում և հիվանդի փորից չար ոգիներին (ջիներին) հանելով, բուժում էին հիվանդություններն ու նույնիսկ ամլությունը (Մուրադեանց 1900, 144):

Քահանան արատ ունեցող մարդկանց հետ միևնույն շարքին էր դասվում, քանի որ հավատալիքներում արատները չար ոգիներից են. «մարդկանց կույրը, կաղը և գոշը չարագուշակ են համարվում, ինչպես քահանան: Երբ մի գործի, ճանապարհ գնալիս քահանայի են հանդիպում, կամ ետ են դառնում և կամ թքում են ու ձեռքը ամորձիքին քսում, որպեսզի չարը խափանվի» (Լալայեան 1903, 231): Շատ հավանական է, որ Նահապետ Քուչակն էլ պատահական ձևով չի ասում.

«*Որտեղ քահանայ տեսեր*
Նայ ծրոեր ճամփուս ու ելեր...» (Քուչակ 1979, 62):

Զարմանալի չէ, որ այս բոլոր հավատալիքներով հանդերձ, քահանային չար աչքի զորություն պետք է վերագրվեր: Եվ ինչպես Երվանդ թագավորն էր իր կախարդական հայացքի ուժով քար պայթեցնում, այնպես էլ քահանան էր դա անում: Վարարակի ջրանցքի (Որոտան գետի ձախ ափին՝ «Քեշիշ արխ») վերաբերյալ պահպանված ավանդությունում՝ «*...երբ ջուրը հասել է ժայռին և անցնելու տեղ չի ունեցել, քահանան բացականչել է. «Ինչ ահագին ժայռ է» և իսկույն ժայռը ճեղքվել է*»: Եվ երևի, որպեսզի ցույց տա, որ չարից էլ չարը կա, ավանդությունը շարունակում է. «*...քահանայի կողքին կանգնած մշակը բացականչում է. «Տերտեր, ինչ լավ աչք ունես» և այդ ասելուն պես քահանայի աչքն էլ է պայթում*» (Լալայեան 1898, 130): Մարտունու շրջանի Զորագյուղում պատմում էին, որ քահանան երեխային կնքելիս աչքով է տվել, երեխան սաստիկ գոռացել, լաց է եղել ու պատռվել, մահացել է (ԴՄՆ, 1982, 45): Քահանային չարակնություն վերագրելը թե՛ ժամանակի, թե՛ տարածության առումով շատ ընդարձակ է. օրինակ՝ միջնադարյան Եվրոպայում ևս մարդիկ վախենում էին քահանաների չար աչքից և հաճախ պաշտպանվում էին ճիշտ հայերի նման: Իտալիայի ամենահայտնի վանքերից Մոնթե Կազինոյի վանական Էրչեմփերթը 842թ. վկայակոչում է մի եպիսկոպոսի, ըստ որի, երբ ինքը քահանայի էր հանդիպում, միշտ անհաջողություն էր պատահում այդ օրը: *Մինչև այժմ,*—գրում է Թ. Ֆ. Էլուորդին,—*շատերն առավոտյան առաջին անգամ տնից դուրս գալով, վանական կամ քահանա հանդիպելիս, ճանապարհը չեն շարունակում, վերադառնում են տուն, միաժամանակ սպասում են, հետո կրկին դուրս գալիս* (Elworthy 1895, 23), որպես թե առաջին անգամն է: Այս դեպքում նույնպես գործում է առաջինի մոգական ուժը:

Վտանգավոր աչք ունեցողների ոչ միայն դեպի առաջ ուղղված հայացքն էր ահաբեկող (ինչպես օրինակ հանգուցյալ լողացողներինը, որ թարս էին նստում ձիուն՝ առաջ չնայելու համար), այլև դեպի ետ ուղղվածը: Որոշ պարագաներում ետ նայելու վերաբերյալ շատ խիստ մոգարգել գոյություն ունի: Հատկապես հոգևորականների (նորից անկախ կրոնից) շրջվելը ծիսական արարողությունների ժամանակ հղի է սարսափազդու հետևանքներով: Ներկայում հավատում են, որ եթե հուղարկավորության ժամանակ քահանան շրջվի ու ետ նայի, կրկին մարդ կմահանա: Միևնույն արգելքն էր գործում հազարավոր տարիներ առաջ. Վեդաներում «*...զոհաբերություն կատարող հոգևորականը իր և աղյուսների միջև ընկած տա-*

րածության վրա մի կուժ ջուր էր լցնում: Ջուրը, որպես «որոտի ճայթյուն», քրմին մեկուսացնում էր չարիքից ու ավերածությունից... Այնուհետև զոհաբերության տեղը վերադառնալիս, նա չպետք է շրջվեր, այլապես ավերի ու կործանման պատճառ կդառնար» (Gonda 1969, 29):

Արհեստավորներից չարակնությամբ վտանգավոր էին համարվում նրանք, ում գործը կապվում էր կախարդանքի և ընդհանրապես գերբնական ուժերի հետ: Ռուսների հավատալիքներում կախարդ կարող էին լինել հովիվները, ջրաղացպանները, մեղվաբույծները, դարբինները: Արհեստավորները կարող էին կախարդ լինել, իսկ երկրագործները՝ ոչ (Никитина 1928, 305): Կավագործն, օրինակ, «հողից բան ստեղծողն է»: Նրա կատարածը դիտվում էր որպես հրաշագործություն և արարչագործության նման մի երևույթ: Բազմաթիվ են աշխարհում այն առասպելները, որտեղ բրուտն է ստեղծում մարդկանց կամ նույնիսկ աշխարհը, ինչպես հին եգիպտացիների բոլոր աստվածների ու աստվածությունների Հայրը, մեծագույն Վարպետը, ամենաառաջին բրուտը, որն իր ձեռքերով բրուտի անիվի վրա կերտեց մարդկանց ու աստվածներին (Бадж 1996, 28): Որոշ վայրերում խեցեգործներն առանձին սրբազան խումբ էին կազմում և քրմերին հատուկ գործառույթներ կատարում: Երբեմն կավագործները կանայք էին (ինչպես Հայաստանում) և իրավունք ունեին ամուսնանալու միայն դարբինների հետ: Կավագործուհին և դարբինը պտղաբերությանը նվիրված ծեսերում հողի արգասաբերությունն ապահովող քրմի և քրմուհու դերն էին կատարում (Иванов 1980, 309–310): Հատկանշական է, որ Աֆրիկայում դարբնությունից կավագործության անջատումից հետո էլ այս երկու արհեստներն ընկալվում են միմյանց հետ անքակտելիորեն կապված: Դարբինը և կավագործուհին դուալ զույգ են կազմում, նրանց թույլատրվում է ամուսնանալ իրար հետ (Оля 1976, 182: Иванов 1983, 20): Եթովպիայում դարբիններին և խեցեգործներին մեկուսացնում էին հասարակությունից, զրկում էին կրոնական սրբազան ծեսերին մասնակցելու իրավունքից, չնայած ակնառու էր, որ նրանք ավելի կրոնասեր էին և ծիսակարգը կատարելու խստությամբ՝ անգերազանցելի: Այնուհանդերձ, մարդիկ հավատում էին, որ նրանք հիվանդությունների պատճառ էին հանդիսանում, իսկ որ գլխավորն է՝ չար աչք ունեին ու նույնիսկ բորենի կամ այլ գիշատիչ գազան դառնալու կարողություն (Elworthy 1895, 28–29: Тэйлор 1896, 276): Ուշագրավ է, որ տարբեր երկրներում, այդ թվում և Հայաստանում, գնչուները դարբնությամբ են զբաղվում (Փափազեան 1898, 226): Այս դեպքում չարակնության ազգային պատկանելությունից բխող պատճառները համընկնում են զբաղմունքից հետևող պատճառների հետ:

Դարբնի հայացքը նույնացվում է Ամպրոպի աստծու հայացքի հետ. սա է պատճառը, որ այն մոգական է ու զարհուրելի: Նույնական են նաև կայծակն ու հայացքը. օրինակ՝ հարավ-արևելյան Ասիայում (Թայվան, ցոուներ) ամպրոպը Երկնային Պապի ձայնն է, իսկ կայծակը՝ նրա զայրացած աչքերի փայլը (Иванов, Топоров 1974, 152): Հայկական հավատալիքներում չար աչքը կապվում էր կայծակի և հիվանդությունների հետ. «*Հիվանդության ամենավտանգավոր ոգին «չար աչքն» է, անձնավորումը «ամպերի միջից շեղ փայլատակող կայծակի», որն ամպերի միջից փայլատակում է որպես ցասկոտ կամ զարհուրելի խեթ հայացք և*

վնասում ոչ միայն մարդկանց ու կենդանիներին, այլև պատահած ամեն ինչի: Հրաչք և Ծովինար կոչվող կայծակնային էակների աչքերը հրեղեն են և այրում են ամեն ինչ: Այլերը վնասում են նաև իրենց մեկ հատիկ հրեղեն աչքով: Բայց չար աչքն ինքն էլ կործանող կայծակի սոսկ մարմնավորումն է. դա հենց ինքը կայծակն է, որ դիտվում է իբրև դևի մեկ աչք: Չար աչքի ամպրոպային բնույթը հայերի մեջ երևում է մի հմայական աղոթքի նախաբանում. «Գայր Չարակն, և որոտայր իբրև զամպ և զառիւծ, և գալարէր իբրև զօձ» (Աբեղյան 1975, 99–100): Աչքի աղոթքներից մեկում բացահայտորեն չի ասվում, որ չար աչքը կայծակ է, բայց նրանից ազատվելու համար աղոթողն այն ուղարկում է ետ՝ ամպի տակ՝ «*Քարը ոտին, քարը ձեռքին, (քար ու քացախ բերնին) աչքերը ամպի տակին…*» (Осипов 1898, 132): Իսկ Նիյաթ աստվածությունը իր կործանարար շանթերը դնում էր նախանձ մարդկանց աչքերի մեջ և «*չար զորությամբ լեցված նախանձորդներ կվնասեին մարդոց, կենդանյաց և առարկաներու… Երբ որ մեկը շատ կհորանջեր, կըսեին «նիաթ ի առե»* (Ալիշան 1910, 235): Բացի նիյաթից, հայերի հավատալիքներում կան չար աչքի այլ ոգիներ, որոնց անունները երբեմն նշվում են, երբեմն՝ չեն հիշատակվում: Օրինակ՝ անանուն ոգի է հանդիպում վերը բերված աղոթքում, որտեղ Քրիստոսը դեմ առ դեմ հանդիպում է չար աչքի անանուն ոգուն և հարցնում է. «*Պիղծ անօրեն հոր կերթաս*»: Մի այլ աղոթքում նշվում են այդ ոգիների անունները՝ «*Ակն խաժիցն ճաքեսցին, և ոչ տեսողաց Թիւիցն՝ պատառեսցին, և սոցունց համաքաւրակ Չարացն սիրտ և կամք՝ սուզեալ՝ բևեռմամբ՝ յանդունդս ընկճեսցի, ընդ սկզբնաչար Չարին Բելիարայ*» (Ալիշան 1910, 235): «Թուխք»-ը ըստ հայր Ալիշանի, զրադաշտական կրոնի բազմաթիվ դևերից մեկն է, որ կոչվում է Տուխս: Նա ոչ միայն խավարի բնակիչ է, այլև կույր է: Նա հայերի հավատալիքներում հանդես է գալիս Խաժքի հետ, որն առաջինից տարբերվում է նրանով, որ տեսնում է և գույնն է այլ՝ կապտականաչ է: Աղոթքի նպատակն է տեսնող և կույր չար աչքերը պայթեցնելը:

Հայ ժողովրդական հավատալիքներում չար աչքը մի դև է, հենց չարի մարմնավորումը, որ շրջում է աշխարհով մեկ 666 տեսակ հիվանդությունների հետ՝ մարդկանց վնասելու և ամեն բարիք ոչնչացնելու նպատակով (Աբեղյան 1975, 99–100): Թե ինչպես է չար աչքը դառնում չար ոգի, հանգամանորեն բացատրում է զրադաշտական առասպելաբանությունը: Սկզբում Անգիրո Մայնյուն, հետո նաև Դրուջը ստեղծեցին չար ոգիներին: Նրանց օգնում էին մարդիկ՝ իրենց անկարգապահությամբ, ագահությամբ, նախանձով, հետաքրքրասիրությամբ և այլ մեղքերով: Այդ չար ոգիներից էր Արասկան՝ նախանձի, չարակամության, ընչաքաղցության և չար աչքի դևը (ՀՈՍ 1998, 110): Ռուսների պատկերացումներում ևս չար աչքը մարդկային մեղսական ու պիղծ արարքների մարմնավորում հանդիսացող դևերից մեկն էր: Նա դասվում էր վեց ամենաչար ոգիների շարքը, որոնցից էին Վելզեվուլը (մթության իշխանը), խորամանկության, ստի, հիվանդության, ոխ ու քենի ոգիները (Никитина 1928, 308):

Մարդկային արատները շատ ժողովուրդների հավատալիքներում են պատկերացվում որպես չար ոգիներ, այդ թվում և չար աչքը, որ մեծամասամբ ագահության և նախանձի հետ է կապվում կամ նույնանում: Հայերեն աչքածակ բառն, ասես, ագահության և չար աչքի միասնության պատկերազարդումը լինի: Իսկ չար

ոգու և չար աչքի միասնականությունն ու ընդհանրությունն արտահայտվում է «*էրկու աչքը մեկ գրող ա*» ասացվածքով և ուղղակի «աչքի գրող» արտահայտությամբ, որտեղ «գրողը» չար ոգի է: Այսպիսով՝ չար աչքը կա՛մ չար ոգի է, կա՛մ նրա կատարած գործողությունը՝ աչքի միջոցով: Վերջինի պատկերավոր օրինակներից է Թոմաս Մաննի «Դոքթոր Ֆաուստուս» վեպի այն դրվագը, որտեղ հերոսը հայացքով սպանում է իր ամենասիրած էակին՝ փոքրիկ զարմիկին և ասում է. «*Բայց երեխան միս ու արյունից է, իսկ ինձ արգելվել է սերն առ մահկանացուն: Նա* (չարքը) *անողոքաբար սպանեց նրան և դրա համար իմ աչքերն օգտագործեց: Իմացե՛ք, երբ հոգին կախված է չարից, մարդու հայացքը թունավոր է և մահաբեր՝ հատկապես երեխաների նկատմամբ*» (Манн 1960, 646):

Բոլոր ժամանակներում չար աչքին հավատալը և կասկածի տակ է առնվել և, որ ավելի տարածված է, ընդունվել է որպես գոյություն ունեցող ճշմարտություն: Կասկածողներից մեկը, ինչպես նշվեց, պատմահայր Խորենացին էր, որ հայացքով քար ջարդելու Երվանդի ունակության մասին գրում է, թե «սուտ է կամ առասպել»: Հին հունական հեղինակների ստեղծագործություններում ևս հանդիպում ենք չար աչքի նկատմամբ կասկածի և նույնիսկ ծանակի: Հելիոդորոսի «Եթովպականք»-ում հետևյալ երկխոսությունն է տեղի ունենում.

— *Մեծարգո՛ Կալասիրիդաս, ի՞նչ հիվանդություն է համակել աղջկաս*:

— *Մի՛ զարմանա*, — պատասխանեցի ես, — *եթե այդպիսի հսկայական բազմության մեջ նրան աչքով են տվել*:

— *Ինչպե՞ս*, — ասաց Խարիկլեսը քմծիծաղով, — *դու է՞լ ես հասարակ ժողովրդի նման հավատում չար աչքին* (Гелиодор 1965, 121):

Պլուտարքոսի «Խրախճական զրույցներում» ևս հյուրերից ոմանք ձեռք են առնում նրանց, ովքեր հավատում են չար աչքի գոյությանը: Իսկ տան տերը պնդում է, որ իրավացի չէ ժխտելը մի բան՝ միայն այն պատճառով, որ մարդիկ այն չեն կարողանում բացատրել, մինչդեռ փաստերը զարմանալիորեն հաստատում են դրա գոյությունը (Плутарх 1990, 90):

Թե՛ անտիկ շրջանի աշխատություններում, թե՛ Վեդաներում և այլ աղբյուրներում փորձեր են կատարվում բացահայտելու և բացատրելու աչքով տալու գործընթացի մեխանիզմը: Հայերի վերաբերյալ նշենք, որ հայոց լեզվում բիբը կոչվում է «լուսնտուն» և հնում համարվում էր, որ աչքն էր լույս տալիս (Բենսէ 1899, 144): Պատահական չէ, որ աչքը նաև «ակն» է կոչվում, որ «աղբյուրի բխած տեղ» է նշանակում (Աճառյան 1971, 107): Ի դեպ, իրականում հակառակն է՝ լույսի շնորհիվ է առաջացել աչքը: Հին հնդիկների պատկերացումներում ևս աչքն էր, որ լուսավորում էր ամեն բան և դրա համար էր նա ակտիվորեն գործում տեսնելու պրոցեսում: «*Բրահմանը շողում է, երբ մարդ խոսում է խոսքով, երբ նա տեսնում է աչքով*» և այլն: Երբ նա չի խոսում և չի տեսնում, նա մահանում է: Բրահմանի փայլող էներգիան մտնում է զգայության գործարանների մեջ, առաջին հերթին նա մտնում է մարդու աչքը: Նրա կենսական շունչը մտնում է մարդու կենսական շնչի մեջ: Այսպիսով, տեսնելու (խոսելու և այլ) գործողությունը դիտվում է որպես բրահմանի փայլատակելը և կենդանի լինելը (խոսքը, շունչը, աչքը և ականջը՝ յուրաքանչյուրը

բրահմանի մեկ քառորդ մասն է կազմում): Աչքի գործունեության վերաբերյալ այս համոզմունքը լիովին բացահայտում է հայացքի միջոցով բարին ու չարը հաղորդելու հնարավորությանը հավատալը, հատկապես այն ժամանակ, երբ այն դեմ առ դեմ ուղղված է դեպի իր նպատակակետը (Gonda 1969, 5–6):

Անտիկ աշխարհի հեղինակները չար աչքի ազդեցության մեխանիզմը բացատրում են, հիմնականում, Էմպեդոկլեսի և Դեմոկրիտոսի բնափիլիսոփայական այն հայեցակետերի հիման վրա, որոնց համաձայն առարկաների արտահոսումներն ազդում են մարդկանց զգայարանների վրա: Ըստ Էմպեդոկլեսի «անցքերի և արտահոսումների» ուսմունքի, բոլոր մարմիններն ունեն մանրագույն անտեսանելի անցքեր: Դրա հետ մեկտեղ մարմիններն ուղղորդված արտահոսումներ են արձակում, որոնք սփռվում են տարածության մեջ: «Անցքերի և արտահոսումների» տեսության օգնությամբ բացատրվում էին ինչպես զգայությունների մեխանիզմներն ընդհանրապես, այնպես էլ տեսողությունը և ձգողականությունը (ինչպես մագնիսը երկաթին) (Плутарх 1990, 440): Ըստ Դեմոկրիտոսի, մարդկային հարաբերությունները կախված են ատոմների արտահոսումներից, որոնք ազդում են զգայության գործարանների վրա և համապատասխան զգայություններ առաջացնում (Лосев 1972, 82):

Պլուտարքոսը տարբերակում է մարդու հայացքի ներգործության մարմնական և հոգեկան տեսակները որպես ուղղակի չար աչք և աչքով տալ: Նա նշում է, որ ում վրա ընկնի չար աչք ունեցողի հայացքը, կպչի շունչը և հասնի խոսքի ձայնը, նա կհիվանդանա և հալումաշ կլինի: Վնասելու պատճառը մարմնից արձակվող արտահոսումներն են: Եվ հոտը, և՛ ձայնը, և՛ շնչառությունը այն մասնիկներից են, որոնք ճառագում են կենդանի մարմինները և դրանցով ազդում զգայության այն գործարանների վրա, որոնց նրանք դիպչում են: Այդ արտահոսումները գլխավորապես կենդանի արարածներից են առաջանում՝ նրանց ջերմության և շարժունակության հետևանքով. շունչը յուրատեսակ բաբախող զարկեր է ստեղծում, որոնք շարժման մեջ են դնում մարմինը և ստիպում նրան անընդհատ այդպիսի արտահոսումներ ուղարկել: Եվ այդ արտահոսումները, պարզ է, որ գլխավորապես աչքերի միջից են ուղղվում դեպի դուրս: Մեր տեսողության գործարանն արտակարգ շարժուն լինելով հանդերձ, շնչի (պնևմայի) հետ մեկտեղ, որը նրա հրե փայլն է կրում, ինչ-որ զարմանալի ուժ է սփռում, որն էլ մարդկանց մեջ բազմապիսի ապրումներ ու գործողություններ է առաջացնում: Տեսածին համապատասխան՝ մարդ հրճվանք և դառնություն է զգում: Տեսողությամբ է պայմանավորվում նաև էրոտիկ ապրումների սկիզբը... Մարդ կարող է հայացքի միջոցով ենթարկվել արտաքին ազդեցություններին և վնասվել: Միևնույն եղանակով կարող է ինքն ազդել և վնաս պատճառել այլոց:

Դեղնախտով հիվանդը դաշտակտցարին նայելով, բուժվում է: Թռչունը դեպի իրեն ձգելով, վերցնում է հիվանդությունը, որը հիվանդի աչքերի միջից վտակի նման հոսում է դեպի նա: Դրա համար էլ դաշտակտցարը չի դիմանում հայացքին, շրջվում է և աչքերը փակում... Մյուս հիվանդություններից ամենավարակիչը աչքի հիվանդություններն են, քանի որ այդպիսին է աչքի ախտահարույց սկզբնաղբյուրն ուրիշին փոխանցելու հատկությունը:

Բայց սրանք բոլորը մարմնական երևույթներ են: Ինչ վերաբերում է հոգեկանին, ինչպիսին որ աչքով տալն է, հայացքի վնասաբերությունն ազդում է նրա վրա, ում այն դիպչում է: Հոգեկան շարժումներն իրենց են ենթարկում և մարմինը: Վշտից, դրամական խնդիրներից, խանդից մարդ գունատվում և նիհարում է: Նախանձը, որ պակաս խորությամբ չի արմատավորվում մարդու հոգում, դիվային չարությամբ է լցնում մարմինը... Եվ երբ մարդ այդպիսի տրամադրությամբ համակված, իր հայացքն է նետում ինչ-որ մեկի վրա, նրա աչքերը, որպես հոգու բնակատեղիին ամենամոտը գտնվող օրգաններ, ներծծած լինելով դիվային չարությունը, կործանում են նրան, ինչպես թունավորված նետերով: Բանական է ու ճշմարիտ, որ այդպիսի հայացքի տակ ընկնողը ենթարկվում է փոփոխության:

Պլուտարքոսի երկում ուշագրավ է նաև սեփական անձը աչքով տալու գաղափարը, որը նա բացատրում է Հիպոկրատի տեսության օգնությամբ. բացարձակ բարեկեցությունն անկայուն է և լիակատար ծաղկման հասած մարմինը անփոփոխ չի մնում, այլ տատանվում է և թեքվում հակառակ ուղղությամբ: Երբ մարդ այնպիսի վիճակի է հասնում, որ իրեն ավելի կատարյալ պետք է տեսնի, քան ինքը սպասում էր և հիանում է ինքն իրենով, նշանակում է, որ նա արդեն մոտ է փոփոխման և երբ նրա վիճակն իսկապես վատանում է, առերևույթ տպավորություն է ստեղծվում, թե նա ինքն իրեն աչքով է տալիս[3]: Եվ դա ջրերի մակերևույթների մոտ ավելի հաճախակի է տեղի ունենում, քան այլ հայելիների: Արտահոսումներն արտացոլվում են իր՝ նայողի վրա և այն, ինչով որ նա ուրիշներին էր վնասում, վնասում է ինքն իրեն: Եվ օրինակ է բերում Եվտելիդեսին, որն իր աչքի չարաղետությամբ ինքն իրեն կործանեց ջրի հայելու մեջ (Плутарх 1990, 90–93):

Թ.Էլուորթին համարում է, որ ինքն իրենով հմայվելն էր Նարցիսսուսի վաղաժամ թոշնելու պատճառը: Նա ինքն իրեն սիրահարվելով, թվչության զոհ դարձավ (Elworthy 1895, 12): Միշտ համարվել է, որ չափազանց շատ հիանալը որևէ անձով կամ իրով, կախարդանքի պատուհաս է դառնում, անկախ նրանից, թե ով է հիացողը (Tripp 1974, 389):

Մտերիմ ու թանկագին մարդկանց աչքով տալը, ըստ Պլուտարքոսի, կախված է մարդու բնավորությունից և ոչ թե նրա չար կամքից: Ինչպես գունդն ու գլանն են իրենց ձևերին համապատասխան շարժվում, այնպես էլ չար աչք ունեցողին իր վիճակն է մղում առաջ՝ իրեն համապատասխան ձևով: Դեռ մոտ ու սիրելի մարդկանց նա ավելի մեծ վնաս է հասցնում: Սրա ապացույցներից մեկն էլ այն է, որ մայրերն աշխատում էին երեխաներին ցույց չտալ իրենց հայրերին կամ երկար չթողնել նրանց ներկայությամբ, որպեսզի հայրերն աչքով չտային երեխաներին (Плутарх 1990, 92), այնպես, ինչպես վերը նշված տարբեր վնասները, որոնք կարող էր հասցնել հայրը:

Հելիոդորոսի բացատրություններն աչքի գործունեության վերաբերյալ ոչ միայն հարազատ են իր ժամանակաշրջանին, այլև երբեմն-երբեմն գրեթե կրկնում են Պլուտարքոսի շարադրանքը: Չար աչքը, ըստ նրա, հետևյալ կերպ է ազդում.

---

[3] Սա համեմատելի է հոգեբան բժիշկ Վ.Լևիի կենսաճոճանակի, արժեքի և արժեքականության տեսությանը (Լևի 1980, 27–32):

«Մեզ շրջապատող օդը մեր խորքն է գնում աչքերի, քթանցքերի միջով, շնչառության և այլ ուղիներով: Այն հատկությունները, որոնք օդն ունի դրսում, մտցնում է նրանց մեջ, ովքեր կլանում են այն, միաժամանակ իր հետ ներս տանելով այն ցավերի սերմերը, որոնք առկա էին օդում մարմնի մեջ ներթափանցելուց առաջ: Դրա համար էլ, երբ նախանձով են նայում գեղեցկությանը, շրջապատի օդը լցվում է այդ չար հատկությամբ և նախանձողը մերձավորների վրա է արձակում դառնությամբ լի իր շունչը: Այն շատ նուրբ է, դրա համար է թափանցում մինչև ուղն ու ծուծը: Եվ շատերին է հիվանդություններ բերում նախանձը, որի անունն է չար աչք: Միրո կիրքն էլ է տեսանելի առարկաների շնորհիվ առաջանում և ինչպես քամու շունչը, աչքերից դուրս գալով, այն նետի պես խրվում է հոգու մեջ՝ որպես կիրք: Դա բնական է, քանի որ մեր զգայություններից տեսողությունն ամենաշարժունն է ու տաքը, այն ամենազգայունն է արտահոսումների նկատմամբ և իրեն հատուկ հրե ոգով սեր է բերում, որը և փոփոխություններ է առաջացնում»:

Ճիշտ Պլուտարքոսի նման, Հելիոդորոսն էլ է համարում, որ ամենավարակիչ աչքերի հիվանդություններն են: Մարդիկ օդի միջոցով են վարակվում՝ առանց միմյանց դիպչելու: Իմիջիայլոց, միջնադարյան պատկերացումներն աչքի գործունեության վերաբերյալ նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ փոփոխություն չեն կրել՝ *«Աչքը հիվանդությունների և համաճարակների տարածման աղբյուր էր հանդիսանում: Եթերային ոգին հիվանդի աչքերից դուրս գալով, ընկնում էր իր կողքին կանգնած և իրեն նայող առողջ մարդու աչքերին, առավել ևս երբ նա տառապանքի մեջ էր գտնվում»*, — վկայակոչում է Ջ. Գոնդան (Gonda 1969, 5–6):

Վերադառնալով Հելիոդորոսին, հարկ է նշել, որ դեղնախտի մասին հիշատակելիս, նա միևնույն դաշտակտցարի օրինակն է բերում, միայն ավելացնելով, որ այդ մասին իրենց հին, սրբազան գրքերում է գրված: Այնուհետև Բասիլիսկուս հրեշավոր օձի օրինակով (որն իր հայացքով ու շնչով ոչնչացնում էր ամեն բան, որ պատահում էր իրեն և ինքն իր հայացքից ոչնչանում էր, եթե հայելուն էր նայում) Հելիոդորոսը ցույց է տալիս, որ եթե մարդիկ հանկարծ աչքով են տալիս ամենասիրելի, թանկագին մարդկանց, ում միայն բարիք են կամենում, բոլորովին զարմանալի չէ: Բնությունը նրանց մեջ նախանձ է առաջացնում և նրանք չեն կատարում այն, ինչ ցանկանում են, այլ անում են այն, ինչ որ հատուկ է իրենց բնությանը (Гелиодор 1965, 121–122), ինչպես Պլուտարքոսի գունդն ու գլանը:

Հայերենում հավանել բառի հոմանիշներն են աչքը ուտելը և աչքը խմելը: Եթե աչքը ուտում է կամ խմում, այն ոչնչացնում է: Սա կրկին ու կրկին ցույց է տալիս, որ ինչպես ամենուրեք, այնպես էլ հայերի մեջ տարածված է, որ չար աչքը հիացական հայացքի տեսք ունի, բայց նախանձի պատճառով վնասում է ամեն բան: Նախանձության դեպքում, ինչպես նշում է Ֆ. Հաքսլին, մարդկանց հետ վարվելու տարբեր եղանակներ կան:

Միջին Արևելքում մինչև այժմ ընդունված է տվյալ առարկայի վրա ուշադրություն դարձնողին նվիրել դուր եկած այդ իրը: Այնտեղ համարվում է, որ նվերը ոչ միայն համակվում է նախանձով, այլև նախանձ մարդուն կախման մեջ է դնում նվիրողից: Ընծաները հոգեբանական փոխանակության իրեղեն արտահայտություններ են: Այլ կերպ ասած՝ մարդուն պարտքի տակ դնելու միջոցներ են: Իսկ ինչ

է պատահում, երբ հիացմունքի առարկան ոչ թե իր է, այլ անձ, — շարունակում է Ֆ. Հաքսլին, — Մերձմիջերկրածովյան երկրներում մոր ներկայությամբ երեխայի գեղեցկությունը գովելը սխալ վարվելակերպի գագաթն է և մայրն աղաչում է, որ կամ քննադատեն երեխայի քթի ձևը կամ թքեն գետնին՝ միաժամանակ որպես վիրավորանք ու բարի մտադրությունների երաշխիք: Նրանք չար աչքից պաշտպանվում են նաև ձեռքի անպարկեշտ շարժումով: Որովհետև երեխայով հիանալը ենթադրում է, որ նա կարող է փոխանակման այն առարկան դառնալ, որի հակադիր բևեռներն են կյանքն ու մահը: Դա ճակատագրին դեմ գնալ է նշանակում: Ճակատագիրը Նեմեսիսն է, որը սկզբնապես բարիք, ունեցվածք, բախտ է բաժանել: Երեխայի գեղեցկությունը կամ մտավոր կարողությունները գովելը նշանակում է գրավել ճակատագրի ուշադրությունը, որը կարող է վերաբաշխել իր բաժանածը:

Չար աչքի հավատքի մաս է կազմում այն սնահավատությունը, որ ճակատագիրն ինքը կարող է նախանձել ու ետ վերցնել իր տվածը, ինչպես վերը նշվեց: Ազգագրագետներն իրերի այսպիսի դրությունը քննարկելով գյուղական հասարակությունում, որտեղ առավել հաջողության հասած մարդուն ատում են և նույնիսկ կապի մեջ են համարում սատանաների հետ, այն բացատրում են սահմանափակ բարիքի տեսությամբ: Գյուղական համայնքները փակ հասարակություններ են, որտեղ որոշակի է հարստության քանակը և եթե մարդիկ իրենց բաժնից ավելի են վերցնում, մեղադրվում են գողության մեջ: Տվյալ դեպքում նրանք հոգիներ են կլանում՝ այլ ոչ հարստություն, բայց արդյունքը շատ նման է համարվում և հիմնված է միևնույն գործընթացի վրա (Huxley 1980, 58–59):

Նման դիտարկում է կատարում և Ա. Գրիգորյանը Պարսկաստանի բնակիչների վերաբերյալ, նշելով, որ «իրանցիների մտածելակերպում դեռ այսօր զորեղ ուժ է վերագրվում չար աչքի ազդեցությանը: Եվ սա բնորոշ է թե՛ հետամնաց ցեղերին, և թե՛ քաղաքաբնակներին: Ծնողների ներկայությամբ երեխայի գեղեցկությունն ակնարկելը սխալ վարվելակերպ է, որովհետև եթե դրանից հետո երեխան հիվանդությունից մահանա, հաստատ կմեղադրվի բարին կամեցողը: Համարվում է, որ նրա նախանձ հոգին է ազդում երեխայի վրա» (Gregorian 1967, 84): Դուր գալուց և գովեստից խուսափելու համար Խորեզմում երեխաներին կեղտոտ ցնցոտիների մեջ էին պահում: Պարզ խրախուսական խոսքն իսկ բավական էր համարվում աչքով տալու համար: Սա առանձնապես կարևոր էր ծանր հիվանդությունից փրկված երեխաներին, միամորիկ զավակներին և կամ մազարում աղերսական աղոթքների շնորհիվ «ձեռք բերվածներին» պահպանելու համար: Հնդկաստանում միևնույն նպատակով երեխաների այտերին ու ճակատին մուր էին քսում (Снесарев 1969, 93):

Ըստ Ֆ. Հաքսլիի, մարդկանց ու կենդանիների վարքի ուսումնասիրությունից պարզվում է, որ հաճախ մարդու մտադրությունն արտահայտվում է աչքերով և ուղղված է աչքերին: Նա օրինակ է բերում վանդակի մեջ նոր բանտարկված առյուծին, որը գոհունակությամբ ուտում է իր բաժին միսը մարդկանց ներկայությամբ այնքան ժամանակ, մինչև որ մեկնումեկը հայացքը նրա վրա է հառում: Այդ պարագայում նա պաշտպանվելով, գոմռում է: Կեռնեխն էլ ուրախ-ուրախ թռչկոտում է լուսամուտի գոգին, բայց անմիջապես անհանգստանում է, երբ որևէ մեկն ուղիղ

վրան է նայում: Թե՛ կենդանիները, թե՛ մարդիկ կարող են ճակատամարտեր մղել սևեռուն հայացքով միմյանց նայելով և հայացքն առաջինը իջեցնողը իրեն պարտված է ճանաչում: Նա էթոլոգիայի լեզվով ասած, ստանձնում է հնազանդվողի դերը, իսկ հաղթողն՝ իշխողի դերը (Huxly 1980, 56–59): Տարածված է նաև այն կարծիքը, որ շունը հարձակվում է իր աչքերի մեջ նայողի վրա[4]:

Հավանաբար, այս դիտարկումներն են ստեղծել այն միտքը, թե կենդանիները ևս կարող են չար հայացք ունենալ ու աչքով տալ: Հատկապես Արևելքի երկրներում տարածված է, որ օձի հայացքը թունավոր է և նա իր աչքերի միջոցով կարող է կործանարար ազդեցություն գործել: Սանսկրիտում[5], օրինակ, օձն անվանվում է «dr̥gvis_.gviṣa drstivisa,q.ṭṭṣā/ում հայացքում թույն է» (Gonda 1969, 26):

Մարդկանց առօրյա հարաբերություններում աչքերի հետ կապված վարքագծի մասին ուշագրավ դիտարկումներ ունի ազգագրագետ Լ. Աբրահամյանը. Ճապոնիայում ընդունված չէ միմյանց աչքերին նայելը փողոցով անցնելիս: ԱՄՆ-ում ևս չեն նայում, իսկ երբ մարդկանց հայացքները հանդիպում են, նրանք թեթևակի ողջունում են միմյանց (hi), որով սոցիալական բարի հարաբերությունների մեջ են մտնում, կարծես բացառելով որևէ չարիք, որ կարող է գալ անծանոթ մարդուց:

Հարկ է նշել նաև, որ ժողովրդական պատկերացումներում չի բացառվում անուղղակի ճանապարհով աչքով տալը: Այսպես, եթե կաթի կաթսան կախված է օջախի վրա և որևէ մեկն այդ ժամանակ կրակ է ուզում, չի կարելի այդ կրակից տալ, որովհետև դրա պատճառով կովը կակնահարվի (Մուրադեանց 1900, 116): Սրանից հետևում է, որ պարտադիր չէ երես առ երես հանդիպել մեկին կամ մի բանի՝ աչքով տալու համար: Այս երևույթը հասկանալի է դառնում, երբ նկատի ենք ունենում, որ հայացքի ազդեցությունը լոկ արտաքին երևույթ չէ, այլ մարդու ներսից է գալիս դեպի դուրս: Այն կապված է հոգու հետ. «հայացքը հոգու խորքից է գալիս», «հայացքը հոգու հայելին է» և «Սման նախնիների հոգիների աստվածն է ու նրանց աչքը» (Гусева 1977, 163): Եվ ի վերջո՝ «աչքերը հոգու ապաստանն են» (Кагаров 1929, 165): Սա է պատճառը, որ չար աչքը, որը գաղտնի մտադրության ծրագիր է, կարող է և տարածության վրա ազդել կախարդական միջոցներով: Մյուս կողմից էլ՝ «ամեն մարդու աչքը չէ, որ աչքով է տալիս» (ԴԱՆ, 1974, III, 13), որովհետև ամեն մեկը չէ, որ չարություն ունի իր հոգում:

Այսպիսով՝ չար աչքն առաջին հերթին չար մտքի հետ է կապված: Միտքն այս դեպքում այնքան առաջնային է, որ երբեմն վերածվելով խոսքի, ավելի է կարևորվում, քան նույնիսկ ինքը՝ աչքը «եթե մարդ չար աչք ունի, նա աչքով կտա, եթե անգամ չտեսնի, այլ միայն խոսի (ԴԱՆ, 1976, I, 36) (հմմտ. կույր թուխքի հետ):

«Աչք-միտք» կապը աղոթքներից մեկում կրկնվում է հինգ անգամ՝ «Չար աչքը արընի, չար միտքը կործանի» ձևով (Լալայեան 1903, 240): Սա մի վկայություն է, որ միշտ չէ, որ խոսքն առկա է ակնահարման գործընթացում, թեև տվյալ դեպքում այս ամենն ասվում է որպես հմայողական աղոթք:

---

[4] Սա վերաբերում է վախեցողներին ու շներին չսիրողներին: Իսկ երբ շանը սիրով ես նայում, նա այդ զգում է, մոտենում, հոտոտում է, ծանոթանում և ուրախությամբ խաղում է:

[5] Հնդկաստանի հին գրական լեզուն:

Ինչպես մեկնաբանում է Լ. Աբրահամյանը, աչքով տալիս գործում է «միտք-խոսք-գործ» բանաձևը: Եվ ինչպես խոսքն է ընդունակ գործ ծնելու, այնպես էլ, հաճախ, միտքն է հանգեցնում գործին: Աչքով տալը գործ դարձնողը միտքն է: Երբեմն բաց է թողնվում խոսքի մակարդակը՝ չար խոսքի: Բարին ցանկանալիս աչքով տալու ժամանակ կատարվում է ասածի հակառակը. չարը, որ միշտ կանգնած է մարդու ձախ կողմում, հակառակն է կատարում: Այն դեպքում, երբ բարձրաձայն բարի ցանկություն են արտահայտում, իսկ մտածում են հակառակը, կրկին չարն է գործում, որովհետև նա ոչ միայն բարձրաձայն ասվածն է լսում, այլև մտքում ասվածը: Ու նաև այն պատճառով է մարդ ինքն իրեն աչքով տալիս, որ նախօրոք է որևէ բան մտադրվում անել: Մայրն իր երեխային աչքով չտալու համար հաճախ կմշտում է նրան (Абрамян 1983, 70): Եթե երեխայի մասին ասեն, որ խոշոր է, պետք է ասել՝ «Չէ՛, մանր է». դա կոչվում է «ճակտով տալ» (ԴԱՆ, 1973, III, 1) և, բնականաբար, վանել աչքի ազդեցությունը: Մինչև այժմ ընդունված է, որ չար աչքով մարդ հանդիպելիս և հետը խոսելիս ոչ միայն երեխային են կմշտում, այլև սեփական հետույքը և դեռ մտքում էլ ասում են «աչքդ հետույքիս» (ԴԱՆ, 1986, Հառիճ, 16): Սա նման է Ֆ. Հաքսլիի բերած օրինակին, երբ մայրը խնդրում է թքել ու վատ բան ասել երեխայի հասցեին՝ առաջ ընկնելով չարից և կանխելով նրա կատարելիք չարագործությունը: Ըղձալի, նվիրական բաների մասին, երբ հատկապես դրանք արդեն կատարվել են, մարդիկ ասում են «սատանի ականջը խուլ»: Իսկ ինչ վերաբերում է չարի ձախ կողմում գտնվելուն, ապա չար աչքը ևս բացառություն չի կազմում և հենց «ձախ աչքն է որ չար է ու աչքով է տալիս» (ԴԱՆ, 1985, 22):

Աչքի գործունեությանը վերաբերող բոլոր նշված օրինակներում միշտ աչքի գործողությունը և ազդեցությունը ուղղված են ներսից դեպի դուրս՝ իր միջոցով և իր իսկ միջով: Սակայն այն ճիշտ հակառակ կողմն էլ է ուղղվում՝ դրսից դեպի ներս՝ մարդ նախ պետք է տեսնի, որպեսզի իմանա, այսինքն ինֆորմացիան աչքի միջոցով դրսից ներս է գնում: Եսայի մարգարեն ասում է. «...զի այդ ժողովրդի սիրտը կարծրացել է ... իրենց աչքերն էլ փակել են, որպէսզի չլինի թէ երբևէ աչքերով տեսնեն ... ու սրտով իմանան ու դարձի գան, և ես էլ բժշկեմ նրանց ...» (Եսայի 6, 10):

Ստացվում է, որ աչքը մի դուռ է, որից ներս ու դուրս կարելի է անել, մի սահման է արտաքին և ներքին աշխարհների միջև: Այսպիսով՝ աչքի միջոցով կարելի է ոչ միայն դրսի աշխարհը տեսնել, այլև մարդու ներսը:

Բառացիորեն ներսը տեսնելու անմիջական ձևը ներկայումս իրիդոսկոպիան է (ծիածանաթաղանթի հետազոտությունը): Աչքերն իրենց մեջ կենտրոնացած արտաքին ռեցեպտորների շնորհիվ շատ զգայուն միջնորդներ են արտաքին աշխարհի և մարդու օրգանիզմի ներքին միջավայրի միջև: Նրանցով են ախտահարման ազդանշանները դուրս գալիս արտաքին աշխարհ: Աչքի ծիածանաթաղանթը (հուն.՝ iris, iridos) յուրատեսակ նյարդա-անոթա-մկանային մի էկրան է, որի ռեցեպտորներում անընդհատ փոփոխություններ են տեղի ունենում՝ կախված մի կողմից լույսի ազդեցությունից, մյուս կողմից՝ մարդու օրգանիզմում տեղի ունեցող ախտաբանական խախտումներից:

Իրիդոդիագնոստիկայի միջոցով հիվանդություններն ախտորոշվում են աչքի եղջերաթաղանթի կազմության և գունային փոփոխությունների հիման վրա: Լու-

սային ազդակների ներգործությամբ՝ ծիածանաթաղանթի հյուսվածքներում ընտելանալու և պաշտպանողական բնույթի ընդհանուր և խիստ լոկալ փոփոխություններ են տեղի ունենում սիմպատիկ նյարդային համակարգի ազդեցության տակ, որոնք կարգավորվում են ուղեղի կենտրոնների միջոցով:

Օրգանիզմում առաջացող խախտումների հետևանքով փոփոխվում են ծիածանաթաղանթի որոշակի միկրոզոնաները՝ «միացնելով» և «անջատելով» մելանոցիտների որոշակի խմբեր: Իրիդոդիագնոստիկայում դա արտահայտվում է պայծառացումների, փոսիկների, պիգմենտային բծերի, օղակների և այլ տեսքով: Ծիածանաթաղանթի այս փոխակերպումները թույլ են տալիս որոշակի ճշգրտությամբ բացահայտել պաթոլոգիկ օջախի տեղը, քանի որ ծիածանաթաղանթն ունի հստակ սոմատոտոպիական (somatotopia՝ հունարեն somatos – մարմին և topos տեղ բառերից) բաժանումներ:

Ծիածանաթաղանթով հիվանդություններ ճանաչելը խոր անցյալից է գալիս. Փոքր Ասիայի քարանձավներում ծիածանաթաղանթի և օրգանիզմի հետ նրա կապի պատկերներ են գտնվել: Ավելի քան երեք հազար տարի առաջ Հնդկաստանում և Չինաստանում հիվանդությունն ախտորոշելիս մեծ նշանակություն էր տրվում զգայության օրգաններին, առավել ևս աչքերի փոփոխությունների հիման վրա կատարված դիագնոստիկային:

Հին Եգիպտոսում ևս բժիշկները զբաղվում էին ծիածանաթաղանթի միջոցով ախտորոշմամբ: Թութանհամոնի հայտնի քուրմ Ել Աքսին էին պատկանում ոչ միայն իրիդոդիագնոստի փառքը, այլև դրա տարածումը, որի շնորհիվ այն հանրածանոթ դարձավ նաև Եգիպտոսից դուրս՝ Բաբելոնում, Տիբեթում, Հնդկաչինում և այլուր: Քուրմը ծիածանաթաղանթով ախտորոշման նկարագրությունը երկու պապիրուսների վրա է կատարել, որոնք ունեն 50մ երկարություն և 1,5մ լայնություն: Սրանք գտնվել են Գիզայում՝ պեղումների ժամանակ: Պապիրուսներում հիշատակվում է ծիածանաթաղանթը «լուսանկարելու» յուրօրինակ մի եղանակ մետաղե թիթեղների օգնությամբ՝ պատրաստված ցինկից կամ նիկելից, ծածկված հատուկ արծաթագույն հեղուկով: Այդպիսի թիթեղը քուրմը մոտեցնում էր հիվանդի աչքին 2սմ տարածության վրա, պահում էր ճիշտ 4 րոպե, հետո ինչ-որ հեղուկ էր քսում, կրկին մոտեցնում աչքին 30 վայրկյանով: Քիմիական վերամշակումից հետո թիթեղի մակերեսի պատկերը գունավոր էր դառնում: Մետաղի վրայի աչքերի պատկերների վառ գույները պահպանվել են մինչև այսօր, չնայած, «գունավոր լուսանկարչության» գաղտնիքը չի բացահայտվել: Թութանհամոնի դամբարանում գտնվել են փարավոնի աչքերի պատկերներով մի քանի թիթեղ, որոնք վկայում են, որ նա շատ հիվանդոտ է եղել:

Հնում տիբեթյան բժշկության մեջ համարվում էր, որ աչքերը կրում են օրգանիզմում առաջացած թերությունների մասին տեղեկությունները: Աչքերի փայլի և կենսական ջերմության կորուստը ցույց էին տալիս մարդու ծանր տանջանքները: Տիբեթցի տիտղոսավոր բժիշկները առաջնային ուշադրությունը դարձնում էին լյարդի գործունեությանն ու նրա «էկրանին»՝ աչքերին (բառացիորեն աչքեր – «լյարդի ծաղիկ»): Նրանք գիտեին բիբի «ցիֆերբլատի» վրա նշմարել այն փոփոխությունները, որոնց հիման վրա կարելի էր դատել որոշակի ներքին օրգանների ախ-

տահարման մասին: Բիբերի այդպիսի մասերը նրանք անվանում էին մարմնի ներսը տանող լուսամուտներ:

Սպիտապատյանի դեղնախտավորությունը և բիբի ներքևի մասի անհարթությունը նրանք դիտարկում էին որպես արյան հիվանդության ախտանիշներ, աչքի սպիտապատյանի դեղնախտավորությունը և անհարթությունը բիբի աջ կողմում՝ լյարդի հիվանդության ախտանիշներ և այլն:

Գրականությունից հայտնի է որ, լեռնային որոշ ցեղերի հովիվները ոչխարների հիվանդությունների տեսակները որոշում էին նրանց աչքերի մեջի գծիկներով ու բծերով: Ոչխար գնելիս, նրանք առաջին հերթին նայում էին աչքերին և մասնավորապես ծիածանաթաղանթներին: Այդ ցեղերի մարդիկ կարծում էին, թե ոչխարների և մարդկանց հիվանդությունները մարմնի մեջ են մտնում սեռական օրգաններով և դուրս են գալիս աչքերից՝ դրանց մեջ թողնելով տարբեր գույների բծեր: Եթե սեռական օրգաններն էին ախտահարվում, աչքերի սպիտապատյանները դառնում էին երկնագույն և ծածկվում արյունատար անոթների ցանցով:

Հաճախ աչքի խնձորակը կոչվում էր մարմնի պատրույգիկ, որը ցույց է տալիս մարդու առողջական վիճակը: Մաքուր աչքը համապատասխանում է մարմնի առողջ վիճակին, խամրածը՝ հիվանդ: Ֆ. Մայենսի գրքում, որը հրատարակվել է 1670 թ. Դրեզդենում, կա ծիածանաթաղանթի առանձին պրոյեկցիոն զոնաների նկարագրությունը: Ուղղահայաց և հորիզոնական գծերով աչքերը բաժանվում են չորս հատվածի, որոնցից յուրաքանչյուրում նշանակված են ներքին որոշակի օրգանների պրոյեկցիաները:

Իրիդոդիագնոստիկայի պատմության ուսումնասիրության մեջ առանձնակի տեղ է գրավում բժշկության դոկտոր Ի. Փեքցելին (1826–1907): Նրա մասին մի ուշագրավ ավանդություն է պահպանվել, որի համաձայն ամեն բան սկսվել է հասարակ մի դեպքից: Երբ Ի. Փեքցելին 11 տարեկան էր, անտառում զբոսնելիս նա բվի բույն է տեսել և փորձել է ձու հանել մեջից: Հանկարծ բուն թռել է տղայի վրա, կառչել նրա ձեռքից: Պայքարում տղան ջարդել է բվի թաթը և հենց այդ պահին նրա վնասված թաթի կողմի աչքի ծիածանաթաղանթի վրա ուղղահայաց սև գիծ է հայտնվել: Հետագայում Փեքցելին իր «Ակնային ախտորոշման և հետազոտման ձեռնարկի» բնաբանն է դարձրել «Աչքը ոչ միայն հոգու հայելին է, այլ նաև մարմնի» (Вельховер 1988, 3–7)[6]:

Չար աչքի և աչքով տալու դեպքում, ինչպես ընդունված է ժողովրդական հավատալիքներում, կրկին գործում է երևույթի երկկողմանիությունը: Այստեղ ինչպես որ ներսից չարն աչքի միջոցով դուրս է գալիս և վնաս պատճառում, այնպես էլ այն կարող է աչքի միջով մտնել մարդու մեջ. «Առավոտը վեր կենալուն պես պետք է աչքերը լվանալ, որ սատանան աչքից ներս չմտնե», — ասում են համշենահայերը (Մուրադեանց 1900, 138): Ինչ վերաբերում է չար աչքից պաշտպանվելուն, շատ մեծ քանակությամբ միջոցներ են կիրառվել այդ նպատակով՝ բանավոր

---

6 Խորին երախտագիտությունս եմ հայտնում ակնաբույժներ՝ բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ Սվետլանա Բախշինովային և բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարիաննա Շահսուվարյանին արժեքավոր տեղեկությունների և խորհուրդների համար:

խոսք (աղոթքներ, բանաձևեր,), գրավոր աղոթքներ (հմայիլներ), արարողություններ, շարժումներ, տարբեր մոգական համարվող նյութերից պատրաստված բազմապիսի պահպանակներ և այլն: Կարևոր է, որ չարխափան հմայական առարկաները ոչ միայն դրսից (տան, բույսերի, կենդանիների և այլն), այլև մարդկանց հագուստի ներսի կողմից էին պաշտպանում կրողին, ինչպես, հատկապես, կապույտ ուլունքները՝ կարված և ամրացված զարդերի ու հագուստի տարբեր մասերին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դաշտային ազգագրական նյութեր

Իսրայելյան Ա., 1972, ԴԱՆ, Լոռի:
Իսրայելյան Ա., 1973, III, ԴԱՆ, գ. Զոլաքար, Մարտունու շրջան:
Իսրայելյան Ա., 1974, ԴԱՆ, գ. Քեթի Ախուրյանի շրջան:
Իսրայելյան Ա., 1976, ԴԱՆ, Սուխումի, տետր I:
Իսրայելյան Ա., 1977, ԴԱՆ, Թալին:
Իսրայելյան Ա., 1978, ԴԱՆ, Ախալքալաք, Ախալցխա:
Իսրայելյան Ա., 1980, ԴԱՆ, Ղուկասյան:
Իսրայելյան Ա., 1981, ԴԱՆ, II, Ղափան, Գորիս, Սիսիան:
Իսրայելյան Ա., 1982, ԴԱՆ, Կամո, Մարտունի:
Իսրայելյան Ա., 1985, ԴԱՆ, Ղափան:
Իսրայելյան Ա., 1986, ԴԱՆ, Հառիճ:

Գրականություն

ԱԲԵՂՅԱՆ 1975 – Աբեղյան Մ., Երկեր, հ. Է, Երևան, 1975:

ԱԼԻՇԱՆ 1910 – Ալիշան Ղ., Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ – Ս. Ղազար, 1910:

ԱԼՊՈՅԱՃԵԱՆ 1952 – Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, Գահիրէ, 1952:

ԱՃԱՌՅԱՆ 1971 – Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Ա հատոր, Երևան, 1971:

ԱՃԱՌՅԱՆ 1979 – Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Դ հատոր, Երևան, 1979:

ԱՂԱՅԱՆ 1976 – Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1976:

ԱՄԱՏՈՒՆԻ 1912 – Ամատունի Սահակ վարդապետ, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912:

ԲԵՆՍԷ 1899 – Բենսէ, Բուլանըխ կամ Հարք գաւառ, ԱՀ, գ. Ե, Թիֆլիս, 1899:

ԳԱԶԱՆՃԵԱՆ 1904 – Գազանճեան Յ., Եւդոկիացի հայ կինը, կրօնք և հաւատալիք, Արեւելեան մամուլ, Իզմիր, № 40, 29 սեպտեմբեր 1904,:

ԴԱԴԵԱՆ 1908 – Դադեան Ա., Վարանդայի ժողովրդական գրականությունից, ԱՀ XVII, №1, Թիֆլիս, 1908:

ԵՍԱՅԻ 1994 – Եսայու մարգարեությունը, 6, 10: Հին Կտակարան, Աստուածաշունչ, Սբ. Էջմիածին, 1994:

ԼԱԼԱՅԵԱՆ 1892 – Լալայեան Ե., Ջաւախքի բուրմունք, Թիֆլիս, 1892:

ԼԱԼԱՅԵԱՆ 1897 – Լալայեան Ե., Վարանդա, ԱՀ, գ. Բ, Թիֆլիս, 1897:

ԼԱԼԱՅԵԱՆ 1898 – Լալայեան Ե, Սիսիան, ԱՀ, գ. Գ, Թիֆլիս, 1898:

ԼԱԼԱՅԵԱՆ 1900 – Լալայեան Ե, Գանձակի գաւառ, ԱՀ, գ. Զ, Թիֆլիս, 1900:

ԼԱԼԱՅԵԱՆ 1903–Լալայեան Ե., Բորչալուի գաւառ, ԱՀ, գ. X, Թիֆլիս, 1903:

ԼԱԼԱՅԵԱՆ 1904–Լալայեան Ե., Բորչալուի գաւառ, ԱՀ XI, Թիֆլիս, 1904:

ԼԱԼԱՅԵԱՆ 1907–Լալայեան Ե., Նոր-Բայազետի գաւառ, ԱՀ, գ. XVI, Թիֆլիս, 1904:

ԼԱԼԱՅԵԱՆ 1914–Լալայեան Ե., Վասպուրական, ԱՀ, գ. XXV, Թիֆլիս, 1914:

ԽՈՐԵՆԱՑԻ 2003–Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց, Ե դար, հ. Բ, Անթիլիաս-Լիբանան, 2003:

ՂԱՆԱԼԱՆՅԱՆ 1960–Ղանալանյան Ա., Առածանի, Երևան, 1960:

ՃԱՆԻԿԵԱՆ 1895–Ճանիկեան Յ., Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895:

ՄԱՆԴԱԿՈՒՆԻ 2008–Յովհան Մանդակունի, Ճառք, Կանոնք, ԺԱ, Երևան, 2008

ՄՈՒՐԱԴԵԱՆՑ 1900–Մուրադեանց Յ., Համշէնցի հայեր, ԱՀ գ. Զ, Թիֆլիս, 1900:

Մատենագիրք Հայոց, Ա հատոր, Ե դար, Աշխարհաբար թարգմանությունը Մարթա Արաբյանի, Անթիլիաս, Լիբանան, 2003 (www.gratun.org/source.php?sid=2536):

ՉՈԼԱՔԵԱՆ 2016–Չոլաքեան Յ., Քեսպ (Պատմա-ազգագրական ուսումնասիրություն), ատենախօսութիւն պատմական գիտութիւններու դոկտորի աստիճանի համար, Երեւան, 2016:

ՊԱԼԵԱՆ 1899–Յ. Պալեան, Պառավաշունչ Բաբերդի, Բիւրակն, կ. Պոլիս, թիւ 33, 25 օգոստոս 1899:

ՊԱԼԵԱՆ 1899–Յ. Պալեան, Պառավաշունչ Բաբերդի, Բիւրակն, կ. Պոլիս, թիւ 36, 15 սեպտեմբեր1899::

ՊԱՏՐԻԿ 1983–Պատրիկ Ա., Պատմագիրք յուշամատեան Սեբաստիոյ և գաւառի հայութեան , Հ. Բ, Նիւ Ճըրզի, 1983:

ՇԱՀԱԶԻԶ 1902–Շահազիզ Ե., Նոր-Նախիջևանը և Ն. Նախիջևանցիք, ԱՀ, գ. IX, Թիֆլիս, 1902:

ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑ 1978–Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. I, Երևան, 1978 :

ՓԱՓԱԶԵԱՆ 1898–Փափազեան Վ., Հայ բոշաներ, ԱՀ, գ. Դ, Թիֆլիս, 1898:

ՔՈՒՉԱԿ 1979–Քուչակ Նահապետ, Հարյուր ու մեկ հայրեն, Երևան, 1979:

АБРАМЯН 1983–Абрамян Л., Ритуал, его сущность и место в народных представлениях, рукопись, 1983.

БАДЖ 1996–Бадж У., Египетская религия. Египетская магия, Москва, 1996.

БАСИЛОВ 1976–Басилов Н., Кобычев В. П., Николайи Кувд, Кавказский Этнографический сборник, VI, 1976.

ВЕЛЬХОВЕР 1988–Вельховер Е. С., Шульгина Н. Б., Алиева З. А., Ромашов Ф. Н., Иридодиагностика, Москва, 1988.

ГЕЛИОДОР 1965–Гелиодор, Эфиопика, Москва, 1965.

ГУСЕВА 1977–Гусева Н. Р., Индуизм, Москва, 1977.

ИВАНОВ 1980–Иванов В. В., Гончар, МНМ, т. I. Москва, 1980.

ИВАНОВ 1983–Иванов В. В., История славянских и балканских названий металлов, Москва, 1983.

ИВАНОВ 1929–Иванов В. В., Топоров В. Н., Исследования в области славянских древностей, Москва, 1929.

КАГАРОВ 1929–Кагаров Е. Г., Состав и происхождение свадебной обрядности., Сборник Музея Антропологии и этнографии, т. VIII, Ленинград, 1929.

ЛЕМАНН 1900–Леманн А., Иллюстрированная история суеверий и волшебства от древности до наших дней, Москва, 1900.

ЛОСЕВ 1972–Лосев А. Ф., Демокрит, БСЭ, т. 8, Москва, 1972.

МАМАЛАДЗЕ 1893–Мамаладзе Т., Народные обычаи и поверия гурийцев. СМОМПК, вып. 17, Тифлис, 1893.

МАНН 1960 – Манн Т., Доктор Фаустус. Собрание сочинений, т. V, Москва, 1960.

НИКИТИНА 1928 – Никитина Н. А., К вопросу о русских колдунах. Сборник Музея антропологии и этнографии, т. VII, Ленинград, 1928.

ОВИДИЙ 1963 – Овидий Публий Назон. Любовные элегии, Москва, 1963.

ОЛЯ 1976 – Оля Б., Боги тропической Африки, Москва, 1976.

ОСИПОВ 1898 – Осипов Г., Селение Даш-Алты Шушинского уезда Елисаветпольской губернии. СМОМПК, вып. 25, Тифлис, 1898.

ПЛУТАРХ 1990 – Плутарх, Застольные беседы, Ленинград, 1990.

РАК 1998 – Рак И. В., Зороастрийская мифология, Санкт-Петербург – Москва, 1998.

РАТНЕР – ШТЕРНБЕРГ 1929 – Ратнер-Штернберг С. А., Музейные материалы по тлингитам. Сборник Музея антропокогии и этнографии, т. VIII, Ленинград, 1929.

СИНГХ 1953 – Сингх М., Угнетенные касты Индии, Москва, 1953.

СНЕСАРЕВ 1969 – Снесарев Г. П., Реликты домусульманских верований и обрядов у узбеков Хорезма, Москва, 1969.

ТЭЙЛОР 1896 – Тэйлор Э. Б., Первобытная культура, т. II, Санкт-Петербург, 1896.

ФРЕЙДЕНБЕРГ 1978 – Фрейденберг О. М., Миф и литература древности, Москва, 1978.

ФРИДРИХ 1985 – Фридрих Вальтер, Близнецы, Москва, 1985.

ХОУЛ 1998 – Хоул К., Энциклопедия примет и суеверий, Москва, 1998.

ЭФЕНДИЕВ 1893 – Эфендиев М., Из поверий татар Шемахинского уезда. СМОМПК, вып. XVII, Тифлис, 1893.

ELWORTHY 1895 – Elworthy Th. F., The Evil Eye, London, 1895.

GONDA 1969 – Gonda Jan, Eye and Gaze in the Veda, Nieuwe Reeks-Deel, LXXV – №1, Amsredam – London, 1969.

GREGORIAN 1967 – Gregorian Arthur T., Oriental Rugs and the Stories they Tell, Boston.

HUXLEY 1980 – Huxley F., The Way of the Sacred, London, 1980.

TRIPP 1974 – Tripp Edward, Classical Mythology, New York and Scarborough, Ontario.1974

Հապավումներ

ԱՀ – Ազգագրական հանդէս

ԴԱՆ – Դաշտային ազգագրական նյութեր

БСЭ – Большая советская энциклопедия

МНМ – Мифы народов мира

СМОМПК – Сборник материалов для описания местностей и племен Кавкаа

Astghik Israelian
PhD in History
History Museum of Armenia
astghikisraelian@gmail.com

THE PROPERTIES OF EYES IN BELIEFS AND IN ALTERNATIVE MEDICINE

Keywords: Evil eye, envy, heavenly bodies, prayer, nationality, territory, iridology.

The eye, in folk cultures, may be terribly harmful. This ancient belief was a widespread one and is still alive among different peoples. It was considered that not only living people could harm but also the dead ones and even the animals as for instance the snakes.

The power of the evil eye in popular traditions depended on people's location, nationality, social status, profession, the colour of the eyes and the hair, etc. The harm caused by the evil eye was often supposed to have influence involuntary, and it was even considered that a person could harm himself. The terrible power of glance might harm the heavenly bodies and gods as well. Not only the glance but also the words might be of a percipitating cause of injury, especially when praising somebody or an evil thought, which comes out from the eyes may harm. More frequently, envy is thought to bring misfortune.

In the works of different specialists we encounter the harmful properties of the evil eye: ethnographers, anthropologists philologists, folklorists, culturologists, linguists, historians, poets, archaeologists, orientalists, clergymen, theologists, Medieval historians, Ancient Greek and Roman philosophers, poets and so on. The idea of the evil eye is found in the Bible, in Avesta and elsewhere.

In medicine the eye examination dates back to ancient times: iridiology-diagnosis of diseases by changes in the structure and colour of the iris was applied in Ancient Egypt, Babylon, Tibet, India, Indochina, and later – in Europe.

As for protection from the evil eye, there are many ways – a huge number of amulets made of different materials, certain gestures, word formulas. Magic rituals are also some of means used to deflect the evil eye and to defend from it.

Астхик Исраелян
Кандидат исторических наук
Музей истории Армении
astghikisraelian@gmail.com

СВОЙСТВА ГЛАЗА В ВЕРОВАНИЯХ И НЕТРАДИЦИОННОЙ МЕДИЦИНЕ

Ключевые слова: Сглаз, зависть, светило, молитва, национальность, место обитания, иридодиагностика.

Вера в сглаз или дурной глаз одно из самых древних и по сей день распространенных представлений у разных народов. Считается, что сглазить могут не только живые, но и усопшие, а также животные, как например змея. Кроме того, сила злого глаза зависит от места проживания людей, их национальности, социального статуса, от специальности, цвета глаз, волос, а также от характера личности.

Злой силе сглаза подвергались не только люди, животные, растения, строения, но и небесные светила и боги. Считается, что человек может сглазить непреднамеренно, иногда – даже сам себя. Сглазить возможно не только взглядом, но и словом, особенно с похвальным, или со злым умыслом и завистью которые, выходят через глаза.

Верования, связанные со страшным воздействием злого глаза, интересовали этнографов, антропологов, филологов, собирателей устного народного творчества, культурологов, лингвистов, литературоведов, историков, поэтов, востоковедов, археологов, священнослужителей, теологов, средневековых историографов, древнеримских и древнегреческих философов, писателей и поэтов. Дурной глаз встречается в Библии, Авесте и пр.

В медицине исследования глаза имеют древнюю историю: иридодиагностикой (диагностикой болезней по изменениям структуры и цвета радужки глаза) занимались в Древнем Египте, Вавилонии, Тибете, Индии, Индокитае, позже – в Европе и пр. Радужка глаза является своего рода нервно-сосудисто-мышечным экраном, в рецепторах которого происходят непрерывные изменения, связанные с воздействием света, с одной стороны, и патологическими нарушениями в организме человека, с

другой. Оценка изменений в радужке, имеющей четкое соматотопическое (somatotopia. греч. somatos тело и topos место) деление, позволяет с известной точностью устанавливать местоположение патологического очага.

Что касается защиты от сглаза, существует огромное количество амулетов из разных материалов, с этой же целью применялись также определенные жесты, произносились поговорки. Заболевших от сглаза исцеляли колдовством, сопровождая молитвами (устными и письменными), различными магическими действами и т.д.

Ասպոիկ Իսրայելյան

Աչքի հատկանիշները հավատալիքներում և ոչ ավանդական բժշկության մեջ

Նկ.1. Քթի օղ սարբ ծառի փայտե ոլոռնքով, 19-րդ դար, Բիթլիս, ՀՊԹ, Ա 4826

Նկ.2. Հմայիլ ձիու, 19-րդ դար, Մարաշ, ՀՊԹ, Ա 4692

Նկ.3. Հմայիլ գոտի, 19-րդ դար, Վան, ՀՊԹ, Ա 1512

Նկ. 4. Աչքի ուլունք (հախճապակի, արծաթ), կարվում էր երեխայի ուսին կամ ամրացվում, Մոկս, ՀՊԹ, Ա 4923

Նկ. 5. Հավկիթ՝ չար աչքից փոնը պաշտպանող, 1910 թ., գ. Խնձորեսկ, ՀՊԹ, Ա 5304

Նկ. 6. Ապարանջան աչքի ուլունքներով, 18–19-րդ դարի սկիզբ, գ. Փշավանց, Գյավաշի գավառ, ՀՊԹ, Ա 6417/2